Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
Կոալիցիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

Արդյունքներ

Մարտ, 2021

Բովանդակություն

Բովանդակություն....2
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 6
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9
ա. Մոնիթորինգի նպատակներ.... 9
բ. Գնահատման մեթոդներ 10
ՈԼՈՐՏ 1: ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 13
Գործողություն 1: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում 14
Գործողություն 2: Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում 17
Գործողություն 3: Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում ..18
Գործողություն 4: ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծում 20
Գործողություն 5: Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում 21
Գործողություն 6: Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում....24
ՈԼՈՐՏ 2: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 26
Գործողություն 7: 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում և իրականացում27
Գործողություն 8: Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա պետական մարմիններում հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերի մշակում և իրականացում....28
ՈԼՈՐՏ 2.1: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (Բարեվարքություն) 30
Գործողություն 9: Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում 31
Գործողություն 10: «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում 33
Գործողություն 11: «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում 34

Գործողություն 12: Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխում..... 36

Գործողություն 13: «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների սահմանում..... 38

Գործողություն 14: Պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնների սահմանում..... 39

Գործողություն 15: Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում 40

ՈԼՈՐՏ 2.2: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 42

(հայտարարագրում, նվերներ, կարգավորման ազդեցության գնահատում, գնումներ, մասնավոր ոլորտ, իրական սեփականատերեր, տնտեսական մրցակցության պաշտպանություն).....42

Գործողություն 16: Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում 43

Գործողություն 17: Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում: Ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում 43

Գործողություն 18: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցում 46

Գործողություն 19: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում, նվերների ռեեստրի ստեղծում.....47

Գործողություն 20: Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման սահմանում, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկության ապահովում 48

Գործողություն 21: Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցում և դրանցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիքակազմի ներդրում՝ այդ թվում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում 50

Գործողություն 22: Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում 51

Գործողություն 23: Գնումների ոլորտի բարելավում 53

Գործողություն 24: Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրում.....54

Գործողություն 25: Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում.....55

ՈԼՈՐՏ 2.3: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 57

(էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրում, պետական կառավարման գործընթացին հասարակության մասնակցության մեխանիզմների ներդրում և կատարելագործում, վարչարարության պարզեցում) 57

Գործողություն 26: Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի ներդրում 58

Գործողություն 27: Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում 59

Գործողություն 28: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում 60

Գործողություն 29: Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացում և e-gov.am-ի շրջանակներում էլեկտրոնային հարթակի ներդրում . 61

Գործողություն 30: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծում 62

Գործողություն 31: Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում 63

ՈԼՈՐՏ 3: ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 65

Գործողություն 32: ՀՀ քրեական օրենսգրքով կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի հստակեցում 66

Գործողություն 33: ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում..... 68

Գործողություն 34: Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում..... 69

Գործողություն 35: Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում..... 71

Գործողություն 36: Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով.....72

Գործողություն 37: Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում.....73

Գործողություն 38: Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում 74

Գործողություն 39: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում 75

Գործողություն 40: Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում.....77

Գործողություն 41: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում 77

ՈԼՈՐՏ 4: ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 79

Գործողություն 42: Հանրային իրազեկման տարեկան արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում 80

Գործողություն 43: «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում..... 81

Գործողություն 44: Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում....82

Գործողություն 45: Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության, «Մարդու իրավունքներ» թեմայով 83

Գործողություն 46: Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում 85

Գործողություն 47: Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում 86

Գործողություն 48: Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում.....87

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ..... 89

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 90

***Ծանոթություն**. մոնիթորինգային աշխատանքները իրականացվել են 2021 թվականի հունվարից փետրվար ամիսներին, իսկ զեկույցը մշակվել է նույն թվականի մարտ ամսվա ընթացքում:*

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԳՐԵԿՈ	ԵԽ Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբ
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԻՀԱ	Իրավաբանների հայկական ասոցիացիա
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱԺ	ՀՀ ազգային ժողով
ՀՀ ԱՆ	ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ԿԳՄՍ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազակերպություն
ՀՀ ՏԿԵՆ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՔԾ	Հատուկ քննչական ծառայություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՕՀՄ	Օպերատիվ-հետախուզական միջոցառում
ՖԽՔ	Ֆոկուս խմբային քննարկում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության ընթացքում բազմիցս ընդունվել են ռազմավարություններ՝ ուղղված կոնկրետ ոլորտներում պետական քաղաքականության առաջնահերթությունների սահմանմանն ու իրականացմանը: Ռազմավարությունների հետ համատեղ Կառավարությունը հաստատում է դրա իրականացման միջոցառումների պլանը, որը պետական մարմինների համար հանդիսանում է ուղենիշ՝ ամենօրյա աշխատանքային պլան:

ՀՀ Կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերի 3-ին հաստատեց «ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը» (այսուհետ նաև՝ Ռազմավարություն և Միջոցառումների ծրագիր): Հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ Կառավարության հռչակած հայեցակարգային կանխադրույթների ու սկզբունքների հետևողական կենսագործումն է, այդ թվում՝ կոռուպցիան ծնող պատճառների վերհանումը և դրանց վերացումը, կոռուպցիայի նկատմամբ հասարակության և հանրային ծառայողների անհանդուրժողական վերաբերմունքի սերմանումը և տարածումը, կոռուպցիայի համատարած և շարունակական նվազեցումը:

Ռազմավարությունը նախատեսում է 48 միջոցառում, որոնցից 2-ի կատարման ժամկետները ավարտվել են (մեկը նախատեսված էր՝ 2019, մյուսը՝ 2020 թվականին), իսկ մնացյալ 46-ը ենթակա են պարբերական կատարման մինչև 2022թ.:

Գործողությունները բաժանված են երեք մեծ խմբերում, բովանդակային առումով ընդգրկում են կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնասյուները. կոռուպցիայի կանխարգելում, հակակոռուպցիոն կրթություն, կոռուպցիոն գործերի քննություն (պատժի անխուսափելիություն): Մշտադիտարկման արդյունքները ցույց տվեցին, որ թեև կան գործողություններ, որոնք ձևական առումով գնահատվում են ամբողջովին կատարված, բայց դրանք բովանդակային առումով ունեն որակական խնդիրներ:

Ներառական ռազմավարություն ունենալու անհրաժեշտությունից ելնելով՝ Ռազմավարությունը հատուկ կարևորում է հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման գործընթացին քաղաքացիական հասարակության և քաղաքացիների ակտիվ ներգրավվածությունը և հանրային վերահսկողության անհրաժեշտությունը: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ Ռազմավարությունը նախատեսում է միջոցառումների իրականացման նկատմամբ մշտադիտարկում՝ ինչպես պետության, այնպես էլ հասարակական կազմակերպությունների կողմից:

Այսպիսով, ի կատարումն Ռազմավարության միջոցառումների ծրագրի 48-րդ կետով սահմանված գործողության[1]՝ Իրավաբանների հայկական ասոցիացիան և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան ներկայացնում է ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառման ծրագրի 2019-2020 թվականների

[1] Գործողությունը ներառում է՝ կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում:

կատարման ենթակա գործողությունների մոնիթորինգի արդյունքները: Մոնիթորինգի հիմնական նպատակն է Ռազմավարության միջոցառումների ծրագրի իրականացման ընթացիկ իրավիճակի և արձանագրված առաջընթացը գնահատումը: Մոնիթորինգի իրականացման համար կատարվել են տեղեկատվության հարցումներ համապատասխան պետական գերատեսչություններ, ուսումնասիրվել են առկա փաստաթղթերը, մոնիթորինգային զեկույցները, ինչպես նաև իրականացվել է երկու ֆոկուս խմբային քննարկում գործողությունների իրականացման համար պատասխանատու պետական գերատեսչությունների և մասնագիտացված ՔՀԿ-ների ու ոլորտային փորձագետների շրջանում: Մոնիթորինգի աշխատանքներն իրականացվել են 2021 թվականի հունվար-փետրվար ամիսներին, իսկ զեկույցը մշակվել է նույն թվականի մարտ ամսվա ընթացքում:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Մոնիթորինգի նպատակներ

Մոնիթորինգի նպատակներն են՝ 1) իրականացնել ուսումնասիրություն՝ պարզելու իրավասու մարմինների կողմից իրականացված Գործողությունների ծրագրի կատարման ընթացքը և դրանց բովանդակությունը (առաջընթացը), 2) գնահատել կատարված աշխատանքներով փաստացի/ակնկալվող արդյունքը և պարզել կատարված փոփոխությունների ազդեցությունը, 3) գնահատել Գործողությունների ծրագրի իրականացման գործընթացը ընտրված թիրախային ոլորտների համար՝ գործողությունների իրականացման որակական տեսանկյունից, 4) պարզել շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցությունը միջոցառումների իրականացմանը, հանրային քննարկումներին:
Մշտադիտարկման ընթացքում համադրվել են յուրաքանչյուր միջոցառման շրջանակներում իրականացված աշխատանքները և այդ միջոցառման համար 2019-2020 թվականներին ակնկալվող արդյունքները և վերստուգիչ ցուցանիշները՝ ըստ կատարված աշխատանքների: Այս մեթոդոլոգիան հնարավորություն է տվել գնահատելու հնարավոր շեղումները և դրանց պատճառները, ձեռք բերված առաջընթացը և միջոցառման կատարման կարգավիճակը: Այն դեպքում, երբ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ կոնկրետ միջոցառումների համար նախատեսված չեն եղել վերստուգիչ ցուցանիշներ, ապա գնահատումը իրականացվել է ակնկալվող և փաստացի արդյունքի համադրման և վերլուծության հիման վրա, որը այդուհանդերձ, մեր գնահատմամբ, ամբողջությամբ չի արտահայտել միջոցառման իրականացմամբ գրանցած առաջընթացն ու ձեռք բերած արդյունքը:

Այսպիսով, սույն զեկույցի շրջանակներում առանձնացվել են Միջոցառումների ծրագրով սահմանված երկու խումբ գործողություններ. 2019-2020 թվականների համար նախատեսված գործողություններ: Ըստ երկու խումբ գործողությունների՝ մշտադիտարկումն իրականացվել է համապատասխանաբար երկու եղանակով՝ քանակական և որակական:

Միջոցառումների ծրագրով սահմանված աշխատանքների իրականացման (առաջընթացի) մշտադիտարկման արդյունքը արտահայտվում է հետևյալ վարկանիշային ցուցանիշներից որևէ մեկով.

1) կատարված է (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են).
2) կատարված է մեծամասամբ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների կեսը կամ կեսից ավելին են կատարվել).
3) կատարված է մասնակի (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված որոշ աշխատանքներ կատարվել են, սակայն դրանք չեն գերազանցում նախատեսված աշխատանքների կեսը).
4) կատարված չէ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ):

Ընդհանուր առմամբ, 2019-2020 թվականների ընթացքում նախատեսվում է ավարտին հասցնել 2 գործողություն, որը ընդգրված է կոռուպցիոն գործերի քննության ոլորտում:
Զեկույցի եզրափակիչ մասում ամփոփվում են մշտադիտարկման ու գնահատման արդյունքները և նրկայացվում են մեթոդական և բովանդակային առաջարկներ՝ վեր հանված խնդիրների և մարտահրավերների լուծման նպատակով:

բ. Գնահատման մեթոդներ

Հետազոտական նպատակներին հասնելու համար կիրառվել է **մեթոդների համադրման մոտեցումը՝** համադրելով որակական և քանակական տվյալները: Տվյալները հավաքագրվել են առաջնային և երկրորդային աղբյուրներից: Հետազոտության մեթոդները ներառում են տեղեկատվության հարցումը, գրասենյակային ուսումնասիրությունը/փաստաթղթերի վերլուծությունը և ֆոկուս խմբային քննարկումները շահագրգիռ կողմերի հետ (ՖԽՔ-ներ): Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2021 թվականի փետրվար-մարտ ամիսներին:
Հաշվի առնելով համաճարակային իրավիճակը երկրում՝ տեղում դեմ առ դեմ հարցազրույցներ և ՖԽՔ-ներ չեն իրականացվել, այլ քննարկումներն իրականացվել են առցանց՝ «Zoom» հարթակի կիրառմամբ: Հետազոտության առանձին մեթոդները ներկայացված են ստորև.

Գրասենյակային ուսումնասիրություն/փաստաթղթերի վերլուծություն և տեղեկատվության հարցում: 2019 և 2020 թվականներիի ընթացքում իրականացվելիք գործողությունների քանակական և ընթացակարգային ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է գրասենյակային ուսումնասիրության/փաստաթղթերի վերլուծության և տեղեկատվության հարցման միջոցով: Այս մեթոդների միջոցով տեղեկատվություն է հավաքագրվել **ելքային մակարդակի ցուցանիշների** վերաբերյալ:

Ֆոկուս խմբային քննարկումներ: **Արդյունքային մակարդակի ցուցանիշները** գնահատվել են հետազոտական որակական մեթոդների միջոցով, մասնավորապես, ՖՔԽ-ների միջոցով: Այս ցուցանիշները ներառում են այն գործողությունները, որոնք իրականացվել են **2019-2020 թվականների ընթացքում**, քանի որ միայն այդ ավարտված գործողությունների համար է հնարավոր ստանալ ազդեցության մակարդակի որոշ գնահատականներ:

ՖՔՆ-ներն իրականացվել են այն կոնտակտային անձանց հետ, ովքեր ներգրավված են Ռազմավարության այն գործողություններում, որոնք նախատեսվել են իրականացնել 2019-2020 թվականների ընթացքում: ՖԽՔ-ներն իրականացվել են այդ գործողությունների իրականացման համար պատասխանատու պետական մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների, իրավաբանների, փաստաբանների, և ոլորտային փորձագետների հետ: Ընդհանուր թվով իրականացվել է 2 ՖԽՔ, որոնցից 1-ը պետական գերատեսչությունների ներկայացուցիչների, 1-ը՝ մասնագիտացված ՔՀԿ ներկայացուցիչների, ոլորտային փորձագետների հետ:

Աղյուսակ 1. Իրականացված ՖԽՔ-ների և խորին հարցազրույցների վերաբերյալ տեղեկատվություն

Մեթոդ	Քանակ	Թիրախային խումբ	Մասնակիցների թիվ
Ֆոկուս խմբային քննակում	1	ՀՀ Արդարադատության նախարարություն, ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ Հատուկ քննչական ծառայություն, ՀՀ Գլխավոր դատախազություն, ՀՀ Ոստիկանություն, ՀՀ Քննչական կոմիտե, ՀՀ Պետական եկամուտների կոմիտե, ՀՀ Կենտրոնական բանկ, ՀՀ Վարչապետի աշխատակազմ	12
Ֆոկուս խմբային քննակում	1	Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ	12

Բոլոր քննարկումները ձայնագրվել են՝ մասնակիցների կողմից նախապես տրված համաձայնության հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՈԼՈՐՏ 1: ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

	2019թ.	2020թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	5	6
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	4	2
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍՇԱՄԲ	-	2
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	-	1
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	1	1

Գործողություն 1: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
1	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամներն ընտրվել են, հանձնաժողովը կազմավորվել է: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակազմը ձևավորվել է և ապահովում է հանձնաժողովի աշխատանքների բնականոն գործունեությունը: Հանձնաժողովին տրամադրվել է առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, պատասխանատվություն կիրառելու համար անհրաժեշտ գործիքակազմ:	Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է առաջարկությունների փաթեթ՝ ուղղված Հանձնաժողովի գործառույթների շրջանակների ընդլայնմանը:	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ձևավորվել է:	Հանձնաժողովն ունի բավարար շենքային, նյութական պայմաններ, աշխատակազմի առնվազն 70%-ը համալրված են, բյուջեի նախագծում և ՄԺԾԾ-ում նախատեսվել է առանձին տող ԿԿՀ-ի ֆինանսավորման համար: Ապահովվել է ԿԿՀ-ի կողմից ԱԺ-ում բյուջեի նախագիծը և կատարման հաշվետվությունը ներկայացնելու օրենսդրական հիմքը:	ՀՀ արդարադատության նախարարություն Վարչապետի աշխատակազմ ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)	Ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: **Այլ արդյունքներ ներկայացվում են ստորև:**

ՀՀ ԱՆ և Վարչապետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ԿԿՀ-ի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) անդամները ընտրվել էին դեռևս 2019 թվականի նոյեմբերին: Հանձնաժողովի անդամներից մեկը հրաժարական տվեց, որից հետո փոխվեց Հանձնաժողովի անդամների ընտրության կարգը: Նախատեսվում էր, որ աշնանը պիտի նոր կարգով մրցույթ հայտարարվեր՝ Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնը լրացնելու նպատակով, սակայն պատերազմի պատճառով մրցույթի անցկացումը հետաձգվեց: Միևնույն ժամանակ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի գործնական կիրառման ընթացքում պարզ դարձավ, որ խնդիր է ծագել Խորհրդի ձևավորման պահի հստակեցման հետ կապված, ինչն էլ առաջացրել է օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն: Վերոնշյալի համատեքստում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում 2021 թվականի հունվարի 19-ին կատարվել են փոփոխություններ (http://parliament.am/draft_history.php?id=12112), ինչի արդյունքում նախատեսվել է մրցույթի նոր ժամկետ: Մասնավորապես սահմանվել է, որ ԱԺ նախագահը ԿԿՀ-ի անդամի՝ 2019 թվականի դեկտեմբերի 6-ին առաջացած թափուր պաշտոնում թեկնածու ընտրելու նպատակով մրցույթն ԱԺ աշխատակազմի միջոցով հայտարարում է ԱԺ նախագահի կողմից մրցութային խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին իրավական ակտը հրապարակելուց հետո՝ 60 օրվա ընթացքում:
Հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովման նպատակով ՀՀ Կառավարության որոշմամբ Հանձնաժողովին հատկացվել է տարածք, որը միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ հիմնանորոգվել են և հանձնվել են ԿԿՀ-ի շահագործմանը:

ԿԿՀ-ի կողմից ՀՀ ԱՆ հետ համաձայնեցված կարգով մշակվել և հանրային քննարկման է ներկայացվել ՀՀ վարչապետի որոշման նախագիծ, որով նախատեսվում է ընդլայնել ԿԿՀ-ի աշխատակիցների քանակը (https://www.e-draft.am/projects/2954/justification): 2020 թվականի մարտի 25-ին «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծերի փաթեթի շրջանակում ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որն ուղղված է ԿԿՀ-ի գործառույթների շրջանակի ընդլայնմանը:

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկության համաձայն՝ 2020 թվականի համար ակնկալվող արդյունքի մասով աշխատանքներն ամբողջությամբ իրականացվել են: Վերստուգիչ ցուցանիշի մասով հարկ է նշել, որ ապահովվել են Հանձնաժողովի կողմից բյուջեի նախագիծ և կատարման հաշվետվությունը ներկայացնելու կարգավորումները, իսկ հաստիքների համալրումը և շենքային պայմանների ամբողջական ապահովումը ընթացքի մեջ է:

2021 թվականի փետրվարի 18-ին ZOOM առցանց հարթակում ԻՀԱ-ն կազմակերպել և իրականացրել է երկրորդ ՖԽՔ-ը: Քննարկմանը մասնակցում էին մեկ տասնյակից ավելի ՔՀԿ-ների ներկայացուցիչներ և ոլորտային փորձագետներ: Մասնակիցների դիրքորոշումն այն էր, որ թեպետ ձևական առումով միջոցառումը գնահատվում է **ամբողջովին կատարված, բայց բովանդակային առումով առկա են լուրջ խնդիրներ**:

Մասնավորապես, 2019 թվականին «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարվեցին, որի արդյունքում վերացվեց անկախ մրցութային խորհուրդը, հետևապես՝ խորհրդի կողմից ԿԿՀ-ի անդամների նշանակման կարգը: Այս փոփոխությունների ուժով՝ ԿԿՀ-ն կազմավորվեց անդամների ուղղակի առաջադրմամբ՝ հետևյալ սուբյեկտների կողմից. մեկական անդամի թեկնածուներ առաջադրեցին ՀՀ կառավարությունը, Ազգային ժողովի երեք խմբակցությունները («Իմ քայլը», «Բարգավաճ Հայաստանը» և Լուսավոր Հայաստանը») և Բարձրագույն դատական խորհուրդը: Առաջադրված բոլոր թեկնածուները ընտրվեցին:

Արդյունքում, ԿԿՀ-ը ստեղծվեց բացառապես քաղաքական պայմանավորվածության արդյունքում՝ առանց ինստիտուցիոնալ անկախության ապահովման, մինչդեռ այն մասնագիտացված կառույց է, և նրա նշանակումները պետք է լինեն բացառապես մասնագիտական տիրույթում, այլ ոչ թե քաղաքական: Մասնագիտացված ՔՀԿ-ները այս կապակցությամբ բազմիցս նշել են, որ ԿԿՀ առաջին կազմի ձևավորումը՝ ոչ մրցակցային, քաղաքական պայմանավորվածությունների միջոցով, խիստ խոցելի է: ՔՀԿ-ները նշեցին նաև, որ անկախ մրցութային խորհուրդ ունենալու իրավական կարգավորումը ՏՀԶԿ-ի կողմից նույնպես բարձր էր գնահատվել Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում. Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլի վերաբերյալ» զեկույցում, որը հրապարակվել էր 2018 թվականի հոկտեմբերին:

Բացի այդ, 2019 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Հայաստանի վերաբերյալ 4-րդ գնահատման զեկույցում, ի թիվս այլոց (ներառյալ դատական և դատախազական համակարգը), ԳՐԵԿՈ-ն անդրադարձել է ԿԿՀ-ի անկախությանը, նշելով, որ *«ԱԺ-ի կողմից ընդունված նոր օրենքը ԿԿՀ անդամների նշանակման գործընթացից հեռացնում է մրցութային հանձնաժողովին և ներդնում ուղղակի առաջադրումների համակարգ: Նման մոդելի հիմնական մտահոգությունը բևեռացման զգալի ռիսկն է: Սա հակակոռուպցիոն մարմինների համար կարևոր գործոն է, քանի որ քաղաքական միջամտությունից և ազդեցությունից դրանց մեկուսացումը հանդիսանում է մարմինների արդյունավետության ապահովման հիմնական սկզբունք: ՔՀԿ-ները ներկայումս առաջադրման կամ ընտրության գործընթացում ներկայացված չեն: Կառավարությունն ու իշխող խորհրդարանական խմբակցությունը կարող են վերահսկել ԿԿՀ-ի մեծամասնությունը: ԳՐԵԿՈ-ն հորդորում է իշխանություններին ապահովել ԿԿՀ-ի անկախությունը, մասնավորապես՝ հավասարակշռված և կայուն կազմի և թափանցիկ ընթացակարգերի միջոցով:»*
2020 թվականին ՀՀ ԱԺ-ը փոփոխեց օրենքը և կրկին նախատեսեց անկախ մրցութային խորհրդի ինստիտուտը, միայն թե այն կիրառելի կլինի ԿԿՀ-ի երկրորդ կազմի դեպքում:

Այսպիսով, թեև ձևական առումով թվում է գործողությունը գնահատվում է **ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ**, սակայն բովանդակային առումով ԿԿՀ-ի **ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**՝ ի սկզբանե խաթարելով նորաստեղծ կառույցի մասնագիտական հենքն ու ինստիտուցիոնալ անկախությունը:

Գործողություն 2: Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
2	Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման նպատակով մշակվել է առաջարկությունների փաթեթ և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	Առաջարկությունների հիման վրա մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթը:	_	Հակակոռուպցիոն մարմնի ձևավորման վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ ոստիկանություն ՀՀ ֆինանսների նախարարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է առաջին ընթերցմամբ: **Այլ արդյունքներ ներկայացվում են ստորև:**

ՀՀ ԱՆ-ի կողմից շրջանառված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը ներկայացվել են տարբեր իրավասու մարմիններին, որոնք ՀՀ ԱՆ-ին տրամադրել են իրենց նկատառումները:

2021 թվականի փետրվարի 18-ին ZOOM առցանց հարթակում ԻՀԱ-ն և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան (այսուհետ նաև՝ Կոալիցիա) կազմակերպել և իրականացրել է երկրորդ ՖԽՔ-ը: Քննարկմանը մասնակցում էին մեկ տասնյակից ավելի ՔՀԿ-ների ներկայացուցիչներ և ոլորտային փորձագետներ: Մասնակիցների դիրքորոշումն այն էր, որ թեպետ ձևական առումով միջոցառումը գնահատվում է **ամբողջովին կատարված, բայց բովանդակային առումով առկա են լուրջ խնդիրներ**: Չանդրադառնալով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի առանձին դրույթներին, ներկայացվեցին հիմնական մտահոգիչ կարգավորումները: Նախ նշենք, որ որ ռազմավարությամբ սահմանված չեն Կոմիտեի անկախության երաշխիքների ուղենիշներ, սակայն հարկ ենք համարում քննարկել դրա անկախության երաշխիքները՝ այն դիտարկելով ռազմավարության ընդհանուր մոտեցումների և նպատակների լույսի ներքո: Նախագծով երաշխավորված չէ Կոմիտեի փաստացի անկախությունը: Ըստ Նախագծի, Կոմիտեն չի դասվում Սահմանադրությամբ նախատեսված անկախ մարմինների շարքին և համարվելու է որպես օրենքով ստեղծված քննչական մարմին, որին անկախության երաշխիքներ տրվելու են միմիայն օրենսդրական կարգավորումների մակարդակում: Բացի այդ, Կոմիտեի նախագահին նշանակում է ՀՀ կառավարությունը՝ մրցութային խորհրդի կողմից ներկայացված թեկնածուների ցանկից: Թեև, առաջին հայացքից ստացվում է, որ նշանակումը իրականացվելու է կոլեգիալ մարմնի կողմից, այդուհանդերձ առկա է մտահոգություն առ այն, որ նշանակումը հայեցողական է, թեկնածուին ընտրելու է Վարչապետը և ներկայացնելու է Կառավարության հաստատմանը, ինչը կարող է ունենալ քաղաքական ազդեցություն:[2]

Այսպիսով, թեև ձևական առումով թվում է գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ,** սակայն բովանդակային առումով Հակակոռուպցիոն կոմիտեի **ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆԱԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**՝ ի սկզբանե խաթարելով նորաստեղծ կառույցի մասնագիտական հենքն ու ինստիտուցիոնալ անկախությունը:

Գործողություն 3: Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
3	Ուսումնասիրվել է հակակոռուպցիոն մասնագիտացված	Մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել հակակոռուպցիոն	_	Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների փորձի	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենսդրական նախագծերի փաթեթն ընդունվել

[2] «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքը ընդունվել է ՀՀ ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտ ամսին, երբ ավարտել են սույն մոնթիորինգի մշակման համար դաշտային աշխատանքները:

	դատարանների վերաբերյալ միջազգային փորձը: Մշակվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ:	մասնագիտացված դատարանների ձևավորմանն ուղղված օրենսդրական նախագծերի փաթեթ՝ սահմանելով որպես ժամանակավոր լուծում հակակոռուպցիոն գործերով մասնագիտացված դատավորների ինստիտուտի ներդրումը: Ներդրվել է հակակոռուպցիոն գործերով մասնագիտացված դատավորների ինստիտուտը:		ուսումնասիրության վերլուծությունը համապատասխան առաջարկություններով ներկայացվել և քննարկվել են Հակակոռուպցիոն խորհրդում: Օրենսդրական փաթեթը նախագծվել է, քննարկվել է շահառուների հետ, ենթարկվել է միջազգային փորձաքննության: Օրենսդրական փաթեթն ուղարկվել է ԱԺ:	ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ) Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ) Արդարադատության ակադեմիա	է: **Այլ արդյունքներ ներկայացվում են ստորև:**

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը 03.02.2021թ. ԱԺ-ում ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ: Միաժամանակ, համապատասխանաբար փոփոխվելու են և լրացումներ են կատարվելու «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում, «ԱԺ Կանոնակարգ» սահմանադրական օրենքում, «Քրեական դատավարության» օրենսգրքում, «Քաղաքացիական դատավարության» օրենսգրքում, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում, «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում:

2021 թվականի փետրվարի 18-ին ZOOM առցանց հարթակում ԻՀԱ-ն և Կոալիցիան կազմակերպել և իրականացրել են երկրորդ ՖԽՔ-ը: Քննարկմանը մասնակցում էին մեկ տասնյակից ավելի ՔՀԿ-ների ներկայացուցիչներ և ոլորտային փորձագետներ: Մասնակիցների դիրքորոշումն այն էր, որ թեպետ ձևական առումով միջոցառումը գնահատվում է **ամբողջովին կատարված, բայց բովանդակային առումով**

առկա են լուրջ խնդիրներ: Չանդրադառնալով վերը թվարկված նախագծերի առանձին դրույթներին, որպես խնդրահարույց կարգավորումներ առաձնացվեցին հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների առաջադրվող չափանիշները, դատավորների նշանակման գործընթացում փորձագետներին ներգրավման կարգը և նրանց առաջադրվող չափանիշները, և այլն:

Այսպիսով, թեև ձևական առումով թվում է գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**, սակայն բովանդակային առումով Հակակոռուպցիոն դատական համակարգի **ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆԱԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**՝ ի սկզբանե խաթարելով նորաստեղծ կառույցի մասնագիտական հենքն ու ինստիտուցիոնալ անկախությունը:

Գործողություն 4: ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
4.	Մշակվել է ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:	Առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակվել է և ընդունվել է օրենսդրական փաթեթ:	–	Գլխավոր դատախազությունում ստեղծվել է կոռուպցիոն գործերով մասնագիտացված ստորաբաժանում	Արդարադատության նախարարություն ՀՀ Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Արդարադատության ակադեմիա	Գլխավոր Դատախազությունում ստեղծվել է կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն: **Այլ արդյունքներ ներկայացվում են ստորև:**

Ըստ Գլխավոր դատախազությունից ստացված տեղեկության՝ ՀՀ գլխավոր դատախազի 24.09.2019 թվականի «ՀՀ Դատախազության կանոնադրությունը հաստատելու մասին և ՀՀ գլխավոր դատախազի 29.06.2007 թվականի թիվ 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանով ստեղծվել է ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը:

Համապատասխան տեղեկությունը ներառված է նաև ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված՝ ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» n 1332-ն որոշման 2020 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների ընթացքի հաշվետվության շրջանակներում: Այսպիով, հարկ է նշել, որ սույն միջոցառման պարագայում կատարված աշխատանքների, դրանց բնույթի և դրանցով ակնկալվող արդյունքի ուսումնասիրությունից և արդյունքային ցուցանիշների հետ համադրությունից պարզ է դարձել, որ իրականացված աշխատանքները մեծամասամբ համապատասխանում են 2020 թվականի համար ակնկալվող արդյունքին և վերստուգիչ ցուցանիշին, սակայն անհրաժեշտ է օրենսդրական փաթեթի ընդունում, որով ՀՀ գլխավոր դատախազության կառուպցիոն հանցագործությունների գործերով հսկողություն իրականացնող ստորաբաժանման կազմավորման կարգը և գործունեության երաշխիքները համահունչ կլինեն Հակակոռուցպիոն կոմիտեի և Հակակոռուպցիոն դատարանների համապատասխան կարգավորումներին և կբխեն հակակոռուպցիոն ոլորտում իրականացվող բարեփոխումների տրամաբանությունից:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 5: Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ արդյունք		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
5.	-	ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման կարողությունները գնահատվել են: Ոլորտային հասարակական կազմակերպությունների կարողությունները գնահատվել են: Կարողությունների գնահատման արդյունքում Հակակոռուպցիոն քաղաքականության առավել	_	Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների կարողությունները գնահատված են, հակակոռուպցիոն քաղաքականության մշակումը և իրականացումը	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ Վարչապետի աշխատակազմ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Առաջարկությունների փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: **Այլ արդյունքներ ներկայացվում են ստորև:**

		արդյունավետ մշակման և իրականացմանն ուղղված առաջարկությունները ներկայացվել են:		կատարվում է առավել արդյունավետ և համակարգային:		

ՀՀ ԱՆ և Վարչապետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Ռազմավարության շրջանակներում կարողությունների զարգացման ուղղությունները պարզելու նպատակով ուսումնասիրվել են միջազգային կազմակերպությունների զեկույցները: Պարզ է դարձել, որ մոնիթորինգի իրականացման՝ տվյալ պահին գործող ինստիտուցիոնալ կառուցակարգերը արդյունավետ չեն: Արդյունքում, ՀՀ վարչապետի աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի և մոնիթորինգի վարչությունը լուծարվել է, վերջինիս լիազորությունները, այդ թվում՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի քարտուղարության աշխատանքների իրացման հետ կապված իրավասությունները կենտրոնացվել են մեկ ստորաբաժանման ներքո և վերապահվել են ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն ստորաբաժանմանը, որը վերակազմակերպվել և ներկայումս գործում է որպես Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն (այսուհետ՝ Վարչություն):

Գնահատվել են նաև ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման կարողությունները, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել պարբերաբար վերապատրաստել վարչության աշխատակիցներին: Միջազգային փորձի հաշվառմամբ, Վարչության կողմից մշակվել է հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանություն:

ՀԿ-ների կարողությունների զարգացման ուղղությունները բացահայտելու նպատակով 2020 թվականի հունիսի 16-ի գրությամբ ՀՀ ԱՆ-ը դիմել է ոլորտային ՀԿ-ներին՝ առաջարկելով վերջիններիս իրականացնել իրենց կարողությունների ինքնագնահատում և դրա հիման վրա կարողությունների զարգացմանն ուղղված առաջարկությունները ներկայացնել ՀՀ ԱՆ: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ ՀՀ ԱՆ-ի կողմից մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ: Միաժամանակ, ՀՀ ԱՆ-ի տրամադրած տեղեկության համաձայն՝ իրականացված աշխատանքները մեծամասամբ համապատասխանում են արդյունքային ցուցանիշներին, սակայն ամբողջական ծավալով կատարված չեն, քանի որ հասարակական կազմակերպությունների կարողությունների գնահատումն ավարտված չէ:

2021 թվականի փետրվարի 18-ին ZOOM առցանց հարթակում ԻՀԱ-ն և Կոալիցիան կազմակերպել և իրականացրել են երկրորդ ՖԽՔ-ը: Քննարկմանը մասնակցում էին մեկ տասնյակից ավելի ՔՀԿ-ների ներկայացուցիչներ և ոլորտային փորձագետներ: Մասնակիցները նշեցին, որ այս մասով վերջիններս միայն մեկ գրություն են ստացել ՀՀ ԱՆ-ից այն մասին, թե ինչ կարիքներ ունեն ՀԿ-ները, բայց դրանից հետո որևէ քննարկում չի կատարվել այդ ՔՀԿ-ների հետ և, փաստացի, վերջնական ամփոփումը կատարվել է առանց ՔՀԿ-ների մասնակցությամբ: Ավելին, այդ ամփոփումը չի ներկայացվել ՔՀԿ-ներին:
ՔՀԿ-ները կարողությունների գնահատման արդյունքում հակակոռուպցիոն քաղաքականության առավել արդյունավետ մշակման և իրականացմանն ուղղված առաջարկություններ են ներկայացրել: Այս մասով առաջարկությունների մի մեծ խումբ ուղղված է եղել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի արդյունավետության բարձրացմանը՝ խորհրդին անդամակցող ՔՀԿ-ների մասով: Մասնակիցների դիրքորոշումն այն էր, Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, որպես այդպիսին, շոշափելի միջոցառումներ չի իրականացրել իր կազմում որակական փոփոխությունների իրականացման ուղղությամբ, այդ թվում նաև՝ ներգրավելու այնպիսի ՔՀԿ-ների, որոնք առաջնային մանդատ ունեն կոռուպցիայի դեմ պայքարում և կարող են խորհրդում ազդել օրակարգային հարցերի նախագծման և որոշումների կայացման վրա: Մինչ այժմ տարածված պաշտոնական հաղորդագրություններից պարզ է դառնում, որ Խորհրդում ներգրավված ՀԿ-ները որևէ լուրջ ազդեցություն չունեն Խորհրդում ձևավորվող օրակարգային հարցերի վրա: ՖՔԽ-ը մասնակցող ՔՀԿ-ները սա պայմանավորեցին այն հանգամանքով, որ Վարչապետի աշխատակազմում բարձր պաշտոններ զբաղեցող առանձին անձիք փոխկապակցված են ոլորտային առանձին ՔՀԿ-ների հետ և առաջնորդվում են նեղ կորպորատիվ շահերով, և ոչ թե՝ հանրային, դրանով Խորհուրդը դարձրել են ձևական բնույթ ունեցող, ոչ արդյունավետ և քաղաքականացված: Ավելին, հրապարակված լրագրողական հետաքննությունը հուշում է, որ ներկայիս Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ՀԿ-ների ներգրավման համար հայտարարված մրցույթը անցկացվել է խախտումներով, որի արդյունքները երեք ՀԿ-ների մասով ոչ օրինական են:[3]

Վերը թվարկված շահերի բախման իրավիճակի արդյունքներից է նաև այն, որ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիային անիմն և անօրինական կերպով դուրս են հանել Հակակոռուպցիոն խորհրդի կազմից և այդ մասին անգամ նախապես չեն ծանուցել: Ավելին, 2019-2020թ.-ների ընթացքում ՀՀ ԱՆ-ը մի քանի անգամ մշակել է ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի n 808-ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին որոշման նախագիծ, որով հնարավորություն կընձեռնվեր Կոալիցիային, որը, որպես 73 ՔՀԿ-ներին միավորող ոչ ֆորմալ ցանց, չունենալով պետական գրանցում,՝մրցութային կարգով ընդգրկվեր Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում: Սակայն նկատի ունենալով վերը նշված այն հանգամանքը, համաձայն որի Վարչապետի աշխատակազմում բարձր պաշտոններ զբաղեցնող առանձին անձիք զբաղված են իրենց հետ փոխկապցակված ՀԿ-ների լոբբինգով, ՀՀ ԱՆ հեղինակած նախագիծը մերժվեց

[3] https://iravaban.net/233713.html

Վարչապետի աշխատակազմի կողմից՝ թույլ չտալու Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիային մրցույթի միջոցով դառնալ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ:[4] Այսպիսով, Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը ներկայումս ոչ միայն իր կազմում չի համախմբում հայաստանյան ամբողջ հակակոռուպցիոն ներուժն ու միտքը, որը առաջին հերթին պետք է աներ, այլև՝ առնվազն երեք Խորհրդի անդամ ՔՀԿ-ների մասով, Խորհրդի կազմը ոչ օրինական է և ոչ լեգիտիմ, ինչի պարագայում Խորհրդի գործունեությունը չի կարող լինել ներառական, մասնակցային, օրինական և արդյունավետ: Ավելին, այս տեսանկյունից չի գնահատվել Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմին հանդիսացող Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կարողությունները:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 6: Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020-2022 պարբերական	2019	2020		
6.	Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների իրականացման գործընթացին աջակցություն ցուցաբերելու նպատակով, իրականացրել է դոնորների համակարգման հանդիպում: Հանդիպման արդյունքները հրապարակվում են:	Յուրաքանչյուր տարի Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդն անց է կացնում 1 նիստ՝ նվիրված հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը:	Իրականացվել է տարեկան առնվազն 1 դոնորների համակարգման նիստ, առկա են նիստերի արձանագրությունները, մամլո հաղորդագրությունները տարածված են:		Վարչապետի աշխատակազմ	Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը նվիրված Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստ չի գումարվել:

[4] https://www.e-draft.am/projects/2720/about

Վարչապետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Հայաստանում արտակարգ և ռազմական դրության պատճառով միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությունն իրականացվում է հեռահար եղանակով: Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ իրականացվում են ինչպես առանձին հանդիպումներ, այնպես էլ համատեղ քննարկումներ՝ ֆինանսավորման և աշխատանքների կատարման կրկնությունից խուսափելու նպատակով: Այսինքն, որպես այդպիսին նիստ չի գումարվել, դրանք եղել առանձին և կոլեգիալ հանդիպումներ՝ ուղղված որոշակի շրջանակի հարցերի քննարկմանը:

Ի լրումն վերոգրյալի, ըստ 6-րդ գործողության՝ յուրաքանչյուր տարի Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդն անց է կացնում **1 նիստ՝** նվիրված հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը: Կատարված գրասենյակային հետազոտությունների արդյունքում, պարզ դարձավ, որը 2020 թվականի ընթացքում Խորհուրդը միայն մեկ նիստ է գումարել (հուլիսի 3-ին), որի արձանագրությունները 2021 թվականի մարտի 15-ի դրությամբ հրապարակված չէին: Ըստ հրապարակված պաշտոնական հաղորդագրության՝[5] նիստը նվիրված չի եղել հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը: Իսկ 2019 թվականին անցկացվել է երկու նիստ՝ հուլիսի 12-ին և օգոստոսի 30-ին:[6] Այս նիստերից յուրաքանչյուրի օրակարգում ներառված է եղել երկու հարց հետևյալի վերաբերյալ.

12.07.2019 թվականի նիստի օրակարգը.

- 1. «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:
- 2. Դատաիրավական բարեփոխումների տեսլականը. Հայեցակարգային մոտեցումներ:

30.08.2019 թվականի նիստի օրակարգը.

- 1. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման մրցույթի արդյունքների ներկայացում
- 2. «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման լրամշակված նախագծի ներկայացում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՉԿԱՏԱՐՎԱԾ**

[5] https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/07/03/Cabinet-meeting/#prettyPhoto
[6] https://anti-corruption.gov.am/am/boardinfo

ՈԼՈՐՏ 2: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

	2019թ.	2020թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	-	2
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	-	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ	-	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	-	2
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	-	-

Գործողություն 7: 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում և իրականացում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
7.	-	Մշակվել է տեղական ինքնակառավարման մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանություն: Մեթոդաբանության հիման վրա 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվել են ռիսկերի համապարփակ գնահատումներ:	_	Ինքնակառավարման մարմիններում ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը հաստատվել է ԿԿՀ-ի կողմից:	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Մշակվել է ՀՀ տիմ-երում ռիսկերի գնահատում իրականացնելու և գնահատման արդյունքում տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիր կազմելու մեթոդաբանության և գործողությունների ծրագրի նախագիծը

ՀՀ ՏԿԵՆ-ի կողմից տրամադրված տեղեկության համաձայն՝ մշակվել է ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու և գնահատման արդյունքում տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիր կազմելու մեթոդաբանության

և գործողությունների ծրագրի նախագիծը, որը ներկայացվել է շահագրգիռ կողմերի քննարկմանը: Արդյունքում ստացվել են առաջարկություններ, որոնց հիման վրա նախագիծը լրամշակվել է և ներկայացվել է ՀՀ ԱՆ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 8: Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա պետական մարմիններում հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերի մշակում և իրականացում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
8.	-	Մշակվել է պետական կառավարման համակարգի մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանություն: Մեթոդաբանության հիման վրա պետական կառավարման համակարգի բոլոր մարմիններում, այդ թվում՝ պետական մասնակցությամբ կազմակերպություններում իրականացվել են ռիսկերի համապարփակ գնահատումներ:	_	Պետական կառավարման մարմիններում ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը հաստատվել է ԿԿՀ-ի կողմից	Պետական կառավարման համակարգի մարմիններ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Աշխատանքներն ընթացիկ փուլում են:

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2019 թվականի նոյեմբերից ԿԿՀ-ը սկսել է աշխատել ԱՄՆ ՄԶԳ փորձագետների հետ, ովքեր 2020 թվականի փետրվարին ներկայացրել են կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության ուղեցույց-նախագիծ:

Մեթոդաբանության և դրա գործարկման շուրջ իրականացվել են քննարկումներ, մասնավորապես՝ ՀՀ ԱՆ-ի հետ, իսկ այնուհետև նաև ՄԱԶԾ-ի փորձագետների հետ: Հիմնական խնդիրն այն է, որ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության «ինքնագնահատման» տարբերակը գնահատվել է սահմանափակ արդյունավետ, իսկ փորձագետների ներկայացրած մեթոդաբանությունը՝ չափազանց խորքային, որի իրականացումը նախանշված ժամկետներում անհնար է: Ուստի, Հանձնաժողովը քննարկումների և այլ փորձագիտական օժանդակությամբ աշխատում է միջանկյալ՝ հիբրիդային մեթոդաբանության, հաստատման ուղղությամբ, որը հնարավորություն կտա վեր հանել կոռուպցիոն ռիսկերը՝ օգտագործելով ոչ միայն «ինքնագնահատման» մեթոդաբանության տարբերակը, այլ տվյալների հավաքման այլ մեթոդներ, որոնք հնարավորություն կտան ապահովել տեղեկությունների օբյեկտիվությունը:

Հանձնաժողովը 2020 թվականին երկու քննարկում է իրականացրել ՀՀ ԱՆ, ԱՄՆ ՄԶԳ փորձագետների, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի փորձագետների, ինչպես նաև Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի մասնակցությամբ՝ մեթոդաբանության նախագծի համալրման և շտկման համար: Քննարկման արդյունքում համաձայնություն է կայացել մշակել կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիբրիդային մեթոդաբանություն: Այս պահին այդ ուղղությամբ աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ:
2021 թվականի փետրվարի 18-ին ZOOM առցանց հարթակում ԻՀԱ-ն և Կոալիցիան կազմակերպել և իրականացրել են երկրորդ ՖԽՔ-ը: Քննարկմանը մասնակցում էին մեկ տասնյակից ավելի ՀԿ-ների ներկայացուցիչներ: ՔՀԿ-ները մտահոգություն հայտնեցին առ այն, որ ԿԿՀ-ն համագործակցելով կառավարությանը և հանձնաժողովին լոյալ մասնագիտական ՔՀԿ-ների հետ՝ խուսափում է համագործակցել անկախ մասնագիտական ՔՀԿ-ների հետ և աշխատում է ընտրողաբար՝ ցուցաբերելով տարբերակված մոտեցում, ոչ թափանցիկ, ոչ ներառական և համագործակցության համար փակ գործելաոճ: Քննարկմանը մասնակից որևէ ՀԿ-ի հետ մեթոդաբանությունը չի քննարկվել:

Այսպիսով, գործողությունը գնահատվել է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ:**

ՈԼՈՐՏ 2.1: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (Բարեվարքություն)

	2019թ.	2020թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	4	7
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	2	3
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ	-	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	2	4
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	-	-

Գործողություն 9: Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
9.	Բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ միջազգային փորձն ուսումնասիրվել է, ներկայացվել են համապատասխան առաջարկություններ: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել և ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով:	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահվել է ««Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ ուսումնասիրությունների իրականացման և, ըստ այդմ, տվյալ անձին նշանակելու իրավասություն ունեցող անձին նշանակման նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելու գործառույթ: Մշակվել և հաստատվել է բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց	–	–	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ Քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը փոփոխվել և լրացվել է:

		արդյունքներով խորհրդատվական բնույթի եզրակացությունների տրամադրման կարգը:				

ՀՀ ԱՆ և Վարչապետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Բարեվարքության կանոնների պահպանման միջազգային փորձն ուսումնասիրվել է, որի հիման վրա դեռևս 2019 թվականին ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե՛ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում և թե՛ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ այլ հանդիպումների ընթացքում բազմիցս քննարկվել էին բարեվարքության համակարգերի նախատեսման առանձնահատկությունները՝ կառավարությունը 2019 թվականին ձեռնամուխ է եղել օրենսդրության մշակմանը: 2020 թվականի մարտի 25-ին «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծերի փաթեթի շրջանակում ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով ընդլայնվել են ԿԿՀ-ի գործառույթները, սահմանվել է բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց արդյունքներով խորհրդատվական բնույթի եզրակացությունների տրամադրման կարգը: Բացի այդ, ԱՄՆ ՄԶԳ փորձագետների, ԵԽ փորձագետի և ՀՀ ԱՆ աջակցությամբ Հանձնաժողովը մշակել և սահմանել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով պետական պաշտոնի նշանակման ենթակա անձանց բարեվարքության ստուգման մեթոդաբանություն և բարեվարքության հարցաթերթիկ: Բացի այդ, ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է նաև ՀՀ ԱՆ-ի կողմից մշակված ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը, որով, ի թիվս այլ կարգավորումների, սահմանվել են դատախազների թեկնածության ցուցակի համալրման փուլում թեկնածության հավակնորդների բարեվարքության ստուգման մեխանիզմները՝ սահմանելով ԿԿՀ-ի իրավասությունները տրամադրելու խորհրդատվական եզրակացություն դատախազների թեկնածության հավակնորդների բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ:

2021 թվականի փետրվարի 18-ին ZOOM առցանց հարթակում ԻՀԱ-ն և Կոալիցիան կազմակերպել և իրականացրել են երկրորդ ՖԽՔ-ը, որի շրջանակներում մասնակից ՔՀԿ-ները որպես թերություն նշեցին այն, որ բարձրաստիճան պաշտոնյաների (օրինակ՝ դատավորներ, դատախազներ) բարեվարքության ստուգման վերաբերյալ ԿԿՀ խորհրդատվական եզրակացությունները ենթակա չեն հրապարակման, հետևապես դժվար է ստուգել նաև դրանց ազդեցության մակարդակը որոշում կայացնողների շրջանում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 10: «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
10.	2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերն ընդունվել են:	«Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով կազմակերպվել են վերապատրաստումներ:	«Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտերի 100%-ն ընդունված է:	_	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Քաղաքացիական ծառայողները վերապատրաստվել են:

Վարչապետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերը ընդունվել են:

2020 թվականի ընթացքում Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել և իրականացրել է «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով վերապատրաստումներ: Վերապատրաստումներն իրականացվել են «Տեղեկատվական հարթակի միջոցով մրցույթների կազմակերպում և իրականացում» և «Մրցույթի հարցազրույցի փուլի հանձնաժողովի անդամության թեկնածուների իրազեկվածության բարձրացում» թեմաներով: Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից հեռավար եղանակով կազմակերպվել են վերապատրաստումներ համակարգում ընդգրկված մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների և մրցույթի հարցազրույցի փուլի հանձնաժողովի անդամության թեկնածուներ համարվող քաղաքացիական

ծառայողների հետ: Յուրաքանչյուր թեմայով իրականացվել է 5 վերապատրաստում: Վերապատրաստման յուրաքանչյուր խմբում ընդգրկված է եղել 10 քաղաքացիական ծառայող: Ընդհանուր առմամբ վերապատրաստվել է թվով 100 քաղաքացիական ծառայող:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 11: «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
	–	«Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության մասին օրենքներով ձևավորվել են էթիկայի հանձնաժողովներ և բարեվարքության հարցերով կազմակերպիչներ: Մշակվել են էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ուղեցույցներ:	–	Պետական կառավարման համակարգի բոլոր մարմիններում նշանակվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչներ, նշակվել է էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության առնվազն 2 ուղեցույց:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)	Բարեվարքության հարցերով կազմակերպիչների պաշտոնների անձնագրերը հաստատվել են: **Այլ արդյունքներ ներկայացվում են ստորև:**

Վարչապետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ պետական մարմիններում, որոնք արդեն անցել են նոր չափանիշներով պաշտոնների գնահատման և դասակարգման համակարգին, նշանակվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչներ

(43 պետական մարմին), հաստատվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների պաշտոնների անձնագրերը, սահմանվել են «Քաղաքացիական ծառայության մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներից բխող բարեվարքության հարցերով կազմակերպիչների իրավունքները, պարտականությունները և գործառույթները, ձևավորվել են էթիկայի հանձնաժողովները ոչ էլեկտրոնային եղանակի ընթացակարգով, իսկ էլեկտրոնային հարթակի ընթացակարգով էթիկայի հանձնաժողովների ձևավորումն ընթացքի մեջ է:

Հարկ է նշել, որ էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ուղեցույցերի նախագծերը դեռևս գտնվում են մշակման փուլում, քանի որ նախևառաջ պետք է սահմանվեն իրավական կարգավորումները (հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները), որից հետո հնարավոր կլինի ամբողջապես մշակել էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ուղեցույցերը:

2020 թվականի հոկտեմբերի 1-ից գործարկվել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը, և 2020 թվականի հոկտեմբերի 1-ից պետական մարմիններում էլեկտրոնային եղանակով էթիկայի հանձնաժողովի ձևավորման նպատակով իրականացվում է քաղաքացիական ծառայողներին քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուների ցանկում ընդգրկելու գործընթացը:

2021 թվականի փետրվարի 18-ին ZOOM առցանց հարթակում ԻՀԱ-ն և Կոալիցիան կազմակերպել և իրականացրել են ԻՀԱ-ն և Կոալիցիան կազմակերպել և իրականացրել են երկրորդ ՖԽՔ-ը, որի շրջանակներում մասնակից ՔՀԿ-ները ներկայացրեցին բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի թերությունները: Ըստ այդմ՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչների աշխատանքը չի համակարգվում և ղեկավարվում որևէ կենտրոնացված կամ ապակենտրոնացված մարմնի կողմից: ԿԿՀ-ի մասին օրենքի համաձայն՝ ԿԿՀ-ն պետք է ապահովի մեթոդական աջակցությունը և, ըստ էության, իրականացնի զուտ մասնագիտական աշխատանքների համակարգման գործառույթ: Նշենք նաև, որ բարեվարքության հարցերով կազմակերպիչները և էթիկայի հանձնաժողովների անդամները պարտադիր կարգով անցնում են վերապատրաստում: Սակայն վերապատրաստումների ազդեցության գնահատման արդյունքները հայտնի չեն: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով, բարեվարքության հարցերով կազմակերպիչը ավելի շատ «կազմակերպիչ» է, քան որոշում կայացնող: Հետևաբար, կազմակերպիչը, չունենալով պրոֆեսիոնալ մասնագիտացված համակարգող և ղեկավար մարմին, դժվար թե կարողանա ինքնուրույն կատարել իրեն վերապահված կարևոր գործառույթները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական մարմիններում կազմակերպիչներ նշանակվում են նախկինում տարբեր հաստիքներ զբաղեցրած անձիք, որոնք չեն եղել հակակոռուպցիոն կամ բարեվարքության ոլորտից: Լրացուցիչ որակական գնահատման կարիք ունեն նաև պարտադիր վերապատրաստումների արդյունքները, որը հնարավորություն կտա պարզելու դրանց արդյունավետությունը և ազդեցությունը: Հետևապես, կարևոր է, որ բարեվարքության հարցերով

կազմակերպիչները ի վիճակի լինեն ամբողջ ծավալով իրականացնել իրենց խորհրդատվական գործառույթը, ինչի արդյունքում արդյունավետ կգործի նաև հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների ինստիտուտը, քանի որ վերջիններիս կարողությունների զարգացման գործում դերակատարում է տրված կազմակերպիչներին:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 12: Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
12.	Ուսումնասիրվել են պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավման հիմնական ուղղությունները:	Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավման ուղղված միջոցառումներ են նախատեսվել ՀՀ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությամբ:	Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններզբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավման ուղղությունների ու ծախսերի հաշվարկի վերաբերյալ վերլուծության հիման վրա մշակված միջոցառումները հաստատվել են Հանրային կառավարման	–	ՀՀ Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ	Միջոցառումները ներկայացվել են Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման գործընթացների կազմակերպման խորհրդի քարտուղարությանը:

			բարեփոխումների ռազմավարության շրջանակներում 2019 թ.			

Վարչապետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 5-ի «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման գործընթացների կազմակերպման խորհուրդ ստեղծելու և դրա աշխատակարգը հաստատելու մասին» N 1246-Ա որոշմամբ ստեղծվել է Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման գործընթացների կազմակերպման խորհուրդ և հաստատվել դրա աշխատակարգը: Որոշման 2-րդ կետով հանձնարարվել է ՀՀ կառավարության գործունեությունը հանրային կառավարման բարեփոխումների ոլորտում համակարգող ՀՀ փոխվարչապետին՝ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման աշխատանքների իրականացման նպատակով ձևավորել խորհրդի ներքո գործող աշխատանքային խմբեր՝ մինչև 2019 թվականի սեպտեմբերի 16-ը: Միաժամանակ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության նախագծի ներկայացման համար վերջնաժամկետ է սահմանվել 2019 թվականի դեկտեմբերի 25-ը: Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 5-ի N 1246-Ա որոշման 3-րդ կետով՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակը մշակել և 2019 թվականի սեպտեմբերին հանրային կառավարման բարեփոխումների ոլորտում համակարգող ՀՀ փոխվարչապետի գրասենյակ է ներկայացրել Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության «Հանրային ծառայություն և մարդկային ռեսուրսների կառավարում» բաժնի՝ «Հանրային ծառայության գրավչության բարձրացում» ենթաբաժնի նախագիծը: Այնուհետև, այն ներկայացվել է Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման գործընթացների կազմակերպման խորհրդի քարտուղարությանը: Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության հաստատման գործընթացը կասեցվել է՝ ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդության պատճառով հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված:

Հիշյալ որոշման համաձայն հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման գործընթացում հանրային քննարկումներ և իրազեկում ապահովելու նպատակով ռազմավարության մշակման գործընթացների կազմակերպման խորհուրդը ձևավորում է հանրային հարթակ՝ ներգրավելով հասարակական, փորձագիտական և գիտական-ակադեմիական համայնքի ներկայացուցիչների: 2021 թվականի

փետրվարի 18-ին ZOOM առցանց հարթակում կազմակերպված ՔՀԿ-ների հետ ՖԽՔ-ների արդյունքում պարզ դարձավ, որ հանրային հարթակը չի ստեղծվել:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ** (կատարման ընթացքը կասեցված է):

Գործողություն 13: «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների սահմանում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
13.	-	Միջազգային փորձն ուսումնասիրվել է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ:	–	–	ՀՀ Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Պետական կառավարման համակարգի մարմիններ	Առաջարկությունների փաթեթը ներկայացվել է շահագրգիռ կողմերին:

Հանրային ծառայողի, քաղաքացիական ծառայողի վարքագծի տիպային կանոնները սահմանելու նպատակով ուսումնասիրվել է միջազգային փորձը, կատարվել են վերլուծություններ և գնահատվել է ներպետական օրենսդրության մեջ միջազգային լավագույն փորձի ներդրման հնարավորությունը: Նշված ուսումնասիրության հիման վրա կազմվել է առաջարկությունների փաթեթ, որը ներկայացվել է շահագրգիռ մարմիններին՝ դիրքորոշման ստացման նպատակով: Դիրքորոշումները մասնակի են ներկայացվել, որոնք ներկայումս ամփոփվում են:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 14: Պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնների սահմանում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
14.	Միջազգային փորձն ուսումնասիրվել է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ:	Մշակվել են պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնները:	–	–	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ) Քննչական մարմիններ (համաձայնությամբ)	Վարքագծի կանոնների մշակումն ընթացիկ փուլում է: **Այլ արդյունքներ ներկայացվում են ստորև:**

Քննչական կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Քննչական կոմիտեում ուսումնասիրվել է միջազգային փորձը, որի հիման վրա մշակվել է «ՀՀ Քննչական կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանելու մասին» Քննչական կոմիտեի նախագահի հրամանի նախագիծը: Նախագիծը 25.06.2020 թվականին ներկայացվել է ԿԿՀ՝ կարծիքի, մինչ այժմ պատասխան չի ստացվել:

ԱԺ-ը չի պատասխանել ԻՀԱ-ի գրավոր հարցմանը: Միաժամանակ, ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված՝ ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» n 1332-ն որոշման 2020 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների ընթացքի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ սույն գործողության մասով ԱԺ-ում իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, որի հիման վրա այժմ միջազգային գործընկերների հետ բանակցություններ են տարվում պատգամավորի վարքագծի կանոնների սահմանման ուղղությամբ: Նույն փաստաթղթի համաձայն՝ ՀՔԾ-ն աշխատանքներ է տանում ՀՔԾ ծառայողի վարքագծի կանոնների սահմանման ուղղությամբ: Մասնավորապես, ՀՔԾ-ում 2014 թվականից գործում է «ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողների վարքագծի» կանոնագիրքը, որը համապատասխանեցվել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պահանջներին: Այնուհետև, ՀՀ

քննչական կոմիտեն ուսումնասիրել է միջազգային փորձը, որի արդյունքում մշակվել է «ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանի նախագիծը: Նշված հրամանի նախագծով սահմանվում են ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները, որոնք Կոմիտեի ծառայողի վարվելակերպի և փոխհարաբերությունների առանձնահատկությունները կարգավորող նորմեր են՝ ուղղված ապահովելու Կոմիտեի ծառայողի պատշաճ վարքագիծը, բացառելու հանրային և մասնավոր շահերի բախումը, ամրապնդելու հասարակության վստահությունը Կոմիտեի նկատմամբ: Նախագծով նախատեսվում են Կոմիտեի ծառայողի վարքագծի սկզբունքները, ընդհանուր կանոնները, վարքագծի կանոնները պաշտոնեական և ոչ պաշտոնեական հարաբերություններում: Մասնավորապես՝ դրույթներ են նախատեսվում քննիչի բարոյական նկարագրի, օրենսդրության պահանջների պահպանման, գործընկերների և այլ անձանց հետ փոխհարաբերությունների, ծառայողական գույքն օգտագործելու տեսանկյունից նրա վարքագծի վերաբերյալ և այլն: Նախագիծը 25.06.2020թ. թիվ 01/12/30972-20 գրությամբ ներկայացվել է ԿԿՀ՝ դիրքորոշման ստացման նպատակով:
Պատգամավորների վարքագծի կանոնները մշակման փուլում են, ներկայացվել են միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությանը:»:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 15: Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
15.	-	Վերանայվել են քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգերը՝ զրոյականացնելով քաղաքացիական ծառայողների ներգրավման գործընթացում քաղաքական	–	–	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ Հասարակական կազմակերպություններ (Համաձայնությամբ)	Ներդրվել է տեղեկատվական հարթակ:

		ազդեցությունը:				

Վարչապետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի 2-րդ բաղադրիչը վերաբերվում է համալրման և ընտրության ուժեղացված համակարգերի համապատասխանությունը պետական կառավարման սկզբունքներին: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են 4 հեռավար հանդիպումներ՝ յուրաքանչյուրը մեկ շաբաթ տևողությամբ: Ծրագրի վերը նշված բաղադրիչի կարևոր կետերից մեկը մրցութային հանձնաժողովների վրա քաղաքական ազդեցությունը զրոյականացնելու վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացումն ու առաջարկությունների ներկայացումն է:

Ներկա պահին աշխատանքներն ընթանում են: Փորձագետների կողմից ներկայացվել են առաջարկություններ, որոնք գտնվում են քննարկման փուլում: Բացի այդ, 2020 թվականի հոկտեմբերի մեկից մեկնարկել է տեղեկատվական հարթակի միջոցով մրցույթների անցկացման գործընթացը: Մրցույթների թեստավորման փուլը ուղիղ հեռարձակվում է, իսկ հարցազրույցի փուլը տեսաձայնագրվում է: Այս գործընթացները հնարավորություն են տալիս մրցույթները կազմակերպել հնարավորինս թափանցիկ՝ զրոյացնելով քաղաքական ազդեցությունը մրցութային գործընթացների վրա:

Միաժամանակ պետք է նշել, որ մրցութային հանձնաժողովների վրա քաղաքական ազդեցությունը զրոյականացնելու վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացումն ու առաջարկությունների ներկայացումը դեռ ընթացիկ փուլում է և ըստ այդմ՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգերը չեն վերանայվել:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

ՈԼՈՐՏ 2.2: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

(հայտարարագրում, նվերներ, կարգավորման ազդեցության գնահատում, գնումներ, մասնավոր ոլորտ, իրական սեփականատերեր, տնտեսական մրցակցության պաշտպանություն)

	2019թ.	2020թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	4	10
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	2	6
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍՇԱՄԲ	1	3
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	1	1
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	-	-

Գործողություն 16: Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
16.	-	Միջազգային փորձի ուսումնասիրությունն իրականացվել է: Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության հստակ չափանիշների և շրջանակի վերաբերյալ առաջարկությունը ներկայացվել է ՀՀ Վարչապետի աշխատակազմ:	–	–	ՀՀ արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Առաջարկությունների փաթեթն ուղարկվել է շահագրգիռ կողմերին:

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ միջազգային փորձն ուսումնասիրվել է, որի հիման վրա կազմվել է հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության հստակ չափանիշների և շրջանակի վերաբերյալ առաջարկությունների փաթեթ: Փաթեթն ուղարկվել է շահագրգիռ մարմիններին, այդ թվում՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 17: Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում: Ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
17.	Կատարվել է միջազգային փորձի	«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում	Միջազգային փորձի	Լրամշակված օրենքի	ՀՀ արդարադատության	Լրամշակված օրենքի նախագիծն

	ուսումնասիրություն: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ: Ուսումնասիրության հիման վրա «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ:	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ընդունվել է: Ընդլայնվել է հայտարարատուների շրջանակը՝ հայտարարատուների ցանկում, ի թիվս մի շարք այլ պաշտոնյաների, ներառելով նաև 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամներին և աշխատակազմերի քարտուղարներին, հանրային նշանակության կազմակերպություններում վարչական պաշտոն զբաղեցնող անձանց: Ընդլայնվել է հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմ հասկացությունը: Վերանայվել է հայտարարագրման բովանդակությունը, ընդլայնվել են հրապարակման ենթակա տվյալները, իջեցվել է	ուսումնասիրությունը համապատասխան առաջարկություններով ներկայացվելու քննարկվել է Հակակոռուպցիոն խորհրդում:	նախագիծը ներկայացվել է ԱԺ:	նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	ընդունվել է:

		հայտարարագրման ենթակա թանկարժեք գույքի արժեքային շեմը, ներդրվել է փաստացի օգտագործվող գույքը հայտարարագրելու պահանջ, հստակեցվել են փոխառությունների և եկամուտների տեսակները, ներդրվել է ծախսերի հայտարարագրման համակարգ: Պետական պաշտոնի հավակնող և նման պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվել է լիազոր մարմնին նոտարական կարգով աշխարհի ցանկացած բանկում և ֆինանսական կազմակերպությունում, ցանկացած երկրի տարածքում իրենց անունից փնտրել և ստանալ տեղեկություններ իրենց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև				

		իրենց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության մասին տեղեկատվություն ստանալու լիազորագիր տալու պարտականություն:				

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ լրամշակված օրենքի նախագիծը ներկայացվել է ԱԺ, որն էլ 16.02.2021 թվականին ընդունվել է:

2021 թվականի փետրվարի 18-ին ZOOM առցանց հարթակում ԻՀԱ-ն և Կոալիցիան կազմակերպել և իրականացրել են երկրորդ ՖԽՔ-ը: Քննարկմանը մասնակցում էին մեկ տասնյակից ավելի ՔՀԿ-ների ներկայացուցիչներ և ոլորտային փորձագետներ: Մասնակիցների դիրքորոշումն այն էր, որ թեպետ նախատեսված գործողությունները կատարվել են, բայց հաշվի առնելով տեղական համատեքստը, պետք է նշել հետևյալը. հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա կինը, անչափահաս երեխաները (ներառյալ որդեգրված երեխաները), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության ներքո գտնվող անձինք և հայտարարատու պաշտոնյայի հետ համատեղ բնակվող ցանկացած չափահաս անձ: Քանի որ պաշտոնատար անձի հետ սերտ առնչություն ունեցող այլ անձինք, ինչպիսիք են ամուսնու ծնողը, երեխան, եղբայրը կամ քույրը, ինչպես նաև կնքահայր-սանիկական կապի մեջ գտնվող անձինք պարտավոր չեն գույք հայտարարել, առկա է պաշտոնատար անձանց պատկանող գույքը նրանց անունով գրանցելու համատարած անօրինական պրակտիկա:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 18: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		

18.	-	Կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ:	–	Միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ համապատասխան առաջարկություններով ներկայացվել ու քննարկվել է Հակակոռուպցիոն խորհրդում (2020թ)	Արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	Առաջարկությունների փաթեթն ուղարկվել է շահագրգիռ կողմերին:

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ առաջարկությունների փաթեթը կազմվել է և ուղարկվել է շահագրգիռ կողմերին:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 19: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում, նվերների ռեեստրի ստեղծում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
19.	Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտը վերլուծվել է, վեր են հանվել առկա	Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների	Միջազգային փորձի ուսումնասիրությունը համապատասխան առաջարկություններով ներկայացվել ու քննարկվել է Հակակոռուպցիոն խորհրդում	Լրամշակված իրավական ակտերի նախագծերի փաթեթը հաստատվել է	Արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Առաջարկությունների փաթեթը հաստատվել է:

	խնդիրները, մշակվել դրանց կարգավորմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:	ինստիտուտի կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագիծ: Մշակվել է նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանք:				

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մշակվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագիծը, մշակվել է նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանք: Առաջարկությունների փաթեթը ուղարկվել է շահագրգիռ կողմերին՝ կարծիքի: Միաժամանակ, ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված՝ ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» n 1332-ն որոշման 2020 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների ընթացքի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ սույն գործողության մասով առաջարկությունների լրամշակված փաթեթը 2020 թվականին հաստատվել է:

Այսպիսով, սույն միջոցառման պարագայում կատարված աշխատանքների, դրանց բնույթի և դրանցով ակնկալվող արդյունքի ուսումնասիրությունից և արդյունքային ցուցանիշների հետ համադրությունից պարզ է դարձել, 2020 թվականին իրականացված գործողությունները մասնակի են համապատասխանում 2020 թվականի ակնկալվող արդյունքի հետ, քանի որ իրավական ակտերի և տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 20: Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման սահմանում, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկության ապահովում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		

20.	Ուսումնասիրվել է լոբբիստական գործունեության կարգավորման,կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման վերաբերյալ միջազգային փորձը: Վեր են հանվել Հայաստանում տվյալ ոլորտում առկա խնդիրները և ներդրման հեռանկարները: Մշակվել և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին է ներկայացվել համապատասխան առաջարկությունների փաթեթ:	_	ՀՀ-ում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության վերաբերյալ, ինչպես նաև կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկությանն ուղղված վերլուծությունը քննարկվել է Հակակոռուպցիոն խորհրդում:	ՀՀ արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ Ազգային ժողով (համաձայնությամբ) Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Նախագծերը մասամբ ընդունված են:

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ուսումնասիրվել է լոբբիստական գործունեության կարգավորման, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման վերաբերյալ միջազգային փորձը, ՀՀ օրենսդրության վերլուծության հիման վրա կուսակցությունների գործունեությունը, այդ թվում՝ թափանցիկությունը կարգավորող օրենսդրական փաթեթն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ: Ըստ փոփոխությունների սահմանվել է, որ յուրաքանչյուր տարի ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակվելու է ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը: Կուսակցությունը ԿԿՀ-ի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային տեղեկատվություն: Այնուհետև, մշակվել է լոբբիստական գործունեությունը կարգավորող օրենսդրական փաթեթ, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկությանն ուղղված առաջարկությունների փաթեթն ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ դիրքորոշում ստանալու նպատակով, նաև ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին ներկայացնելու նպատակով: Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում քննարկվել են քաղաքական և լրատվական գործունեության ֆինանսավորման թափանցիկության հարցերը և առկա խնդիրները:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 21: Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցում և դրանցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիքակազմի ներդրում՝ այդ թվում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		

21.	-	Ուսումնասիրվել են հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրները Ուսումնասիրվել է հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ միջազգային փորձը և առկա իրավիճակը: Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հանրային նշանակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:	–	Ուսումնասիրվել է հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ միջազգային փորձը և առկա իրավիճակը: Ուսումնասիրվել են հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրները: Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հանրային նշանակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Ուսումնասիրությունները կատարվել են, արդյունքները քննարկվել են շահագրգիռ կողմերի հետ:

Էկոնոմիկայի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ուսումնասիրվել են հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրները, գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության միջազգային փորձը: Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են հանրային նշանակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 22: Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		

22.	Ուսումնասիրվել է մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ միջազգային փորձը: Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ:	Ներկայացվել են գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ներդրման վերաբերյալ առաջարկություններ:	–	Ուսումնասիրությունը քննարկվել է հակակոռուպցիոն խորհրդում: Իրականացվել է առնվազն 2 հանրային քննարկում: Մասնավոր ոլորտի կազմակերպություններից ստացվել են առնվազն 5 առաջարկներ:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ Արդարադատության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Առաջարկությունները ներկայացվել են և քննարկվել Հակակոռուպցիոն խորհրդում:

Էկոնոմիկայի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Միացյալ Թագավորության Լավ կառավարման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Կորպորատիվ կառավարման և ֆինանսական հաշվետվողականության բարելավված կանոնակարգ» ծրագրի շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարության անմիջական մասնակցությամբ «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» (PwC) ընկերության ու Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել Կորպորատիվ կառավարման կանոնագրքի նախագիծը (այսուհետ՝ Կանոնագրքի նախագիծ):
Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կանոնագրքի մշակման (այդ թվում՝ համապատասխանության ծրագրերին առնչվող դրույթների մասով) նախարարությունը համագործակցում է Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի հետ, իսկ սույն կետով նախատեսված միջոցառման իրականացման համար որպես պատասխանատու մարմին՝ բացի ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ ԱՆ-ից, հանդես են գալիս նաև ՀԿ-ները:

«Հակակոռուպցիոն համապատասխանությունը որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատվության բաղադրիչ» ձեռնարկի շնորհանդեսի ընթացքում ներկայացվել են ինչպես Կանոնագրքի նախագծի հակակոռուպցիոն համապատասխանությանը վերաբերող սկզբունքները, այնպես էլ հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ներդրման վերաբերյալ առաջարկություններ:

Այդուհանդերձ, համապատասխանության պահանջների ներդրման վերաբերյալ առաջարկությունները չեն քննարկվել Հակակոռուպցիոն խորհրդի նիստում, քանի որ Հակակոռուպցիոն խորհրդի նիստ չի կայացել:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԵԾԱՍՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 23: Գնումների ոլորտի բարելավում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
23.	-	Պետական գնումների համակարգի շարունակական կատարելագործման նպատակով իրականացվել է ոլորտային խնդիրների ուսումնասիրություն: Ուսումնասիրության հիման վրա մշակվել և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում քննարկվել է պետական գնումների համակարգի շարունակական կատարելագործմանն ուղղված առաջարկությունների փաթեթը:	_	Իրականացվել է ուսումնասիրություն գնման գործընթացում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման ուղղությամբ (2020թ.-ի 2-րդ եռամսյակ): Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում և տրվել են համապատասխան փոփոխությունների հանձնարարականներ (2020թ.-ի 3-րդ եռամսյակ):	ՀՀ ֆինանսների նախարարություն	Ներկայացվել են մի շարք օրենսդրական փոփոխությունների նախագծեր:

Ֆինանսների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Ֆինանսների նախարարության կողմից մշակվել և 16.12.2020 թվականին Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի

մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Վերոնշյալ նախագծերը ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2021 թվականին ներկայացվել են ՀՀ ԱՆ՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում քննարկելու նպատակով: Պետք է նշել, որ ուսումնասիրությունը և դրա հիման վրա մշակված օրենսդրական փաթեթը չեն քննարկվել Հակակոռուպցիոն խորհրդի նիստում, քանի որ 2020 թվականի չորրորդ եռամսյակում Հակակոռուպցիոն խորհրդի նիստ չի կայացել:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 24: Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
24.	-	Միջազգային փորձն ուսումնասիրվել է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ: Մշակվել է պետական ռեգիստրի շրջանակներում իրական սեփականատերերի գրանցամատյանի ծրագրային ապահովումը:	_	Մշակվել ու գործարկվել է իրական սեփականատերերի գրանցամատյանի էլեկտրոնային ծրագրային ապահովումը:	Արդարադատության Նախարարություն Պետական կառավարման համակարգի մարմիններ Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Գործողությունը կատարված է: **Այլ արդյունքներ ներկայացվում են ստորև:**

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ միջազգային փորձն ուսումնասիրվել է, ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ, մշակվել է պետական ռեգիստրի շրջանակներում իրական սեփականատերերի գրանցամատյանի ծրագրային ապահովումը: Բացի այդ, պետական ռեգիստրի շրջանակներում իրական սեփականատերերի (շահառուների)

գրանցամատյանի ծրագրային ապահովումը պատրաստ է գործարկման, արդեն իսկ մշակվել են համապատասխան իրավական ակտերի նախագծերը: Ավելին, առաջընթաց քայլ է իրականացվել, քանի որ ճանապարհային քարտեզին զուգահեռ մշակվել ու շրջանառվել է նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը, որով բոլոր իրավաբանական անձանց համար իրական շահառուների բացահայտման պարտականություն է սահմանվում: Բացի այդ, հասանելի է նաև արդարադատության նախարարի՝ Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը հաստատելու մասին հրամանը:[7]

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 25: Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
25.	-	Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի օրենսդրությունն ուսումնասիրվել է: Մշակվել է առկա խնդիրների կարգավորմանն ուղղված առաջարկությունների փաթեթ, այդ թվում՝ Հանձնաժողովի կողմից ստուգումների իրականացման մեխանիզմների կատարելագործման, հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման գործընթացում Հանձնաժողովին օպերատիվ տվյալների հասանելիության տրամադրման հնարավորության դիտարկում:	_	Իրականացվել է ուսումնասիրություն տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի օրենսդրության կատարելագործման ուղղությամբ (2020թ.-ի 4-րդ եռամսյակ):	<< Արդարադատության նախարարություն << տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ)	Գործողությունը կատարված է: Օրենսդրական փոփոխություններն ընդունվել են:

[7] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138750

ՀՀ ԱՆ ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը 03.03.2021 թվականին ԱԺ-ում ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ: Այս կապակցությամբ, հարկ է նկատել, որ ամբողջովին կատարվել են 2019-2020 թվականներին նախատեսված գործողությունները, ինչպեսև՝ կատարվել են 2021 թվականի համար նախատեսված որոշ աշխատանքներ: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ՝ 2020 թվականի համար՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի օրենսդրությունն ուսումնասիրվել է: Մշակվել է առկա խնդիրների կարգավորմանն ուղղված առաջարկությունների փաթեթ, այդ թվում՝ Հանձնաժողովի կողմից ստուգումների իրականացման մեխանիզմների կատարելագործման, հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման գործընթացում Հանձնաժողովին օպերատիվ տվյալների հասանելիության տրամադրման հնարավորության դիտարկում: 2021 թվականի համար՝ առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակվել են իրավական ակտերի նախագծեր, որը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2020 թվականին արդեն իսկ մշակվել և Ազգային ժողովի կողմից 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Տնտեսական մրցացկության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և հարակից օրենքներում (ներառյալ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» և «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներում) կատարվել են փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենքները, որոնցով՝

- Նախատեսվել են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցության և Հանձնաժողովին օպերատիվ տվյալներ տրամադրելու մեխանիզմները հակամրցակցային համաձայնությունների, գերիշխող դիրքի չարաշահման և տնտեսական գործունեության համակարգման կանխարգելման և այդ իրավախախտումների գործերով:
- Ընդլայնվել է Հանձնաժողովի կողմից ստուգումներ իրականացնելու իրավասության շրջանակը, ներդրվել է շարունակական մշտադիտարկման ինստիտուտը:
- Տարբերակվել են Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթները՝ սահմանելով դրանց բնորոշ առանձնահատկությունները:
- Տարբերակվել են իրավախախտման վարույթի մասնակիցները, նրանց իրավունքների ու պարտականությունների ծավալը, վարույթի հարուցման առիթները, կարգավորվել են վարչական վարույթների միացման ու առանձնացման ընթացակարգերը և այլն:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

ՈԼՈՐՏ 2.3: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

(էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրում, պետական կառավարման գործընթացին հասարակության մասնակցության մեխանիզմների ներդրում և կատարելագործում, վարչարարության պարզեցում)

	2019թ.	2020թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	3	6
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	-	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍՇԱՄԲ	-	3
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	3	3
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	-	-

Գործողություն 26: Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի ներդրում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
26.	Ուսումնասիրվել է տեխնիկական հնարավորությունը: Մշակվել և ՀՀ Վարչապետին է ներկայացվել առաջարկությունների փաթեթ:		–	–	ՀՀ Վարչապետի աշխատակազմ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Հարթակի ստեղծման աշխատանքները մեկնարկել են:

Վարչապետի աշխատակազմի և ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի ընթացքում վերագործարկվել է էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը, որը հնարավորություն է տալիս դիմումներ, բողոքներ և հարցումներ ուղարկել գրեթե բոլոր պետական մարմիններին: Միաժամանակ, ներկայում գործարկվում է նաև քաղաքացիների հետ հետադարձ կապի պլատֆորմը, որը հնարավորություն է տալու գնահատել մատուցված ծառայությունների որակը և հավաքագրված տվյալների հիման վրա վերլուծել պետական մարմինների աշխատանքի արդյունավետությունը: Կովիդի համավարակի փորձը ցույց է տվել, որ միասնական հեռախոսային կենտրոնները արդյունավետ չեն գործում, քանի որ ի վերջո քաղաքացին ստիպված է լինում իր հարցի պատասխանը գտնել վերահասցեագրված հեռախոսահամարներին զանգահարելով: Հետևաբար, յուրաքանչուր մասնագիտացված գերատեսչության մակարդակով թեժ գծի գործարկումը ավելի օպերատիվ աշխատանքի հնարավորություն է տալիս:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրման միջոցառմամբ մշակվել է պետական ծառայությունների մատուցման միասնական հարթակի տեխնիկական նկարագիրը, մեկնարկել են հարթակի ստեղծման աշխատանքները, մշակված մեթոդաբանության հիման վրա իրականացվել է 101 բիզնես գործընթացների վերլուծություն, մշակվել է օպտիմալացման և արդիականացման առաջարկների փաթեթ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 27: Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
27.	Կատարվել են www.e-draft.am հարթակի արդիականացմանն ուղղված աշխատանքներ:	www.e-draft.am հարթակը ինտեգրված է մի շարք այլ էլեկտրոնային հարթակների հետ: Զուգահեռաբար իրականացվում են www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության իրազեկման միջոցառումներ:		Իրավական ակտերի նախագծերի մշակման միասնական հարթակում տեղադրվող ակտերի նախագծերի շրջանակը և թվաքանակը ընդլայնվել է 10%-ով (2020թ.-ի 4-րդ եռամսյակ):	ՀՀ արդարադատության Նախարարություն, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Արդիականացման հայեցակարգը պատրաստ է:

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից մշակվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի արդիականացման հայեցակարգը: Թվայնացման խորհրդի նիստում կայքի արդիականությունը ստացել է դրական եզրակացություն և ներկայացվել է միջազգային դոնոր կազմակերպություններին՝ ֆինանսավորման նպատակով: Այնուհետև, www.e-draft.am հարթակի՝ մի շարք այլ էլեկտրոնային հարթակների հետ ինտեգրման աշխատանքները ընթացքի մեջ են, զուգահեռաբար www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության իրազեկման միջոցառումներ չեն իրականացվել:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԵԾԱՄԱՍՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 28: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
28.	Ուսումնասիրվել է պետական մարմիններում քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների շրջանակը:	Մշակվել են ծառայությունների մատուցման որակի բարելավմանն ուղղված առաջարկներ:	Պետական մարմիններում քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների շրջանակի վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվել է:	Պետական մարմիններում քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների շրջանակի վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվել է: Արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն խորհրդում	Վարչապետի աշխատակազմ Պետական կառավարման համակարգի մարմիններ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)	Ծառայությունների որոշ մասի լավարկման առաջարկությունները ներկայացվել են: **Այլ արդյունքներ ներկայացվում են ստորև:**

Վարչապետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակի հետ համատեղ իրականացրել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների գույքագրում՝ նախապես մշակված ձևաչափով: Խորհրդատվական կազմակերպության կողմից իրականացվել է ծառայությունների որոշ մասի ուսումնասիրություն և ներկայացվել են առաջարկներ դրանց բիզնես գործընթացների լավարկման ուղղությամբ: Աշխատանքներ են տարվում կառավարության e-gov.am կայքի բովանդակային և ֆունկցիոնալ վերաթողարկման ուղղությամբ, ինչի արդյունքում մի տեղում կհավաքվի ամբողջ տեղեկատվությունը:

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկության համաձայն՝ մշակվել է պետական ծառայությունների մատուցման միասնական հարթակի տեխնիկական նկարագիրը, մեկնարկել են հարթակի ստեղծման աշխատանքները, մշակված մեթոդաբանության հիման վրա իրականացվել է 101 ծառայության բիզնես գործընթացների վերլուծություն, մշակվել է օպտիմալացման և արդիականացման առաջարկների փաթեթ: Ավելին,

պետական կառավարման համակարգի որոշ մարմինների կողմից արդեն իսկ իրականացվել են պետության կողմից մատուցվող ծառայությունների ընդլայնում և որակի բարելավում: Այդուհանդերձ, պետք է նշել, որ առաջարկները չեն քննարկվել Հակակոռուպցիոն խորհրդի նիստին՝ նիստ չկայանալու պատճառով:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 29: Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացում և e-gov.am-ի շրջանակներում էլեկտրոնային հարթակի ներդրում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
29.	-	Արդիականացվել է sso.am էլեկտրոնային համակարգը և ներդրվել e-gov.am հարթակի շրջանակներում:	–	–	ՀՀ Վարչապետի աշխատակազմ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)	Իրականացվում են ծառայությունների մատուցման միասնական e-gov.am հարթակի դիզայնի հայեցակարգային լուծումների մշակման աշխատանքները:

Վարչապետի աշխատակազմի և ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մշակվել է պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը, հայտարարվել է մրցույթ, ընտրվել է կապալառու կազմակերպությունը: Մեկնարկել են հարթակի ստեղծման աշխատանքները: Ներկայումս, իրականացվում են ծառայությունների մատուցման միասնական e-gov.am հարթակի դիզայնի հայեցակարգային լուծումների մշակման աշխատանքները: Ընթացիկ փուլում է Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացման հայեցակարգը:
Իրականացվել է համակարգի աշխատանքների վերլուծություն: Վերհանվել են առկա թերությունները և իրականացվում են առկա խնդիրների շտկմանն ուղղված առաջարկների փաթեթի մշակման աշխատանքները՝ ծառայությունների առավել արդյունավետ և արագ մատուցումն առցանց եղանակով ապահովելու նպատակով: Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացման

հայեցակարգի մշակումից և sso.am էլեկտրոնային համակարգի ծրագրային մշակման աշխատանքների իրականացումից հետո կդիտարկվի էլեկտրոնային համակարգի ներդրումը e-gov.am հարթակում:
Կառավարության փոխգործելիության հարթակին միացված են շուրջ 25 ռեգիստրներ: Կառավարության փոխգործելիության հարթակին ինտեգրված ռեգիստրների հետ մեկտեղ մեծանում է միասնական գրասենյակների գործունեության շրջանակը՝ ընդլայնելով մատուցվող ծառայությունների քանակը:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 30: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
30.	-	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ:	_	Միջազգային փորձն ուսումնասիրվել ու ներկայացվել է Հակակոռուպցիոն խորհուրդ (2020թ.-ի 3-րդ եռամյակ):	ՀՀ Վարչապետի աշխատակազմ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Տեխնիկական առաջադրանքի նախնական տարբերակը մշակված է

Վարչապետի աշխատակազմի և ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա պահանջվող առաջարկությունների փաթեթի մշակումը դեռևս գտնվում է կատարման փուլում:
«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա կմշակվեն բարեփոխման առաջարկությունները: Տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի տեխնիկական առաջադրանքի նախնական տարբերակը մշակված է:
2021 թվականի առաջին եռամսյակում նախատեսվում է շահագրգիռ կողմերի հետ քննարկել տեխնիկական առաջադրանքը, միջազգային փորձը և տեխնիկական առաջադրանքի վերջնական համաձայնեցված տարբերակը ներկայացնել Թվայնացման խորհրդի քննարկմանը:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 31: Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
31.	-	Ազդարարման համակարգի գործունեության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված առաջարկությունների ներկայացում:	–	Ազդարարման դեպքերի միասնական վիճակագրությունը ներառված է ՀՀ ԱՆ տարեկան հաշվետվության մեջ, ՀՀ կառավարության ծրագրի կատարման տարեկան զեկույցում, Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում: Հրապարակվել է 2019-2020թթ. Ազդարարման համակարգի գործունեության մշտադիտարկման վերաբերյալ զեկույց (2020թ.):	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	Կազմվել է առաջարկությունների փաթեթ:

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ազդարարման համակարգի գործունեության վերաբերյալ իրականացվել են մշտադիտարկում և ուսումնասիրություն, որոնց հիման վրա ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված առաջարկությունների փաթեթ է մշակվել, որն ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ քննարկման, այնուհետև ներկայացվել ՀՀ Վարչապետի աշխատակազմ: Բացի այդ, ազդարարման դեպքերի միասնական վիճակագրությունը ներառվում է ՀՀ ԱՆ տարեկան հաշվետվության մեջ, ՀՀ կառավարության ծրագրի կատարման տարեկան զեկույցում, Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում: Ուստի, այս միջոցառման շրջանակներում աշխատանքները կատարվել են մեծամասամբ, քանի որ 2019-2020թթ. Ազդարարման համակարգի գործունեության մշտադիտարկման վերաբերյալ զեկույց չի հրապարակվել:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ**:

ՈԼՈՐՏ 3: ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

	2019թ.	2020թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	8	9
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	7	8
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍՍԱՄԲ	-	1
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	1	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	-	-

Գործողություն 32: ՀՀ քրեական օրենսգրքով կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի հստակեցում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցիչ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
32.	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ սահմանելով կոռուպցիոն հանցագործությունների կողմնորոշիչ ցանկը:	-	Ապահովվել է կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի ուղենիշային սահմանումը՝ ըստ ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի, ԵԽ ու ԵՄ փորձագետների առաջարկությունների:	–	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ վարչապետի աշխատակազմ ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ Քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ոստիկանություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե	**Ներկայացվում է ստորև:**

ՀՀ ԱՆ, Վարչապետի աշխատակազմի, Ոստիկանության և Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել և 2020 թվականի

մարտի 25-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N ՀՕ-207-Ն ՀՀ օրենքը, որով ՀՀ քրեական օրենսգրքում առանձին հավելվածով՝ Հավելված 6-ով, սահմանել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը:

- 32-րդ միջոցառման քննարկման համար ԻՀԱ-ն և Կոալիցիան 2021 թվականի փետրվարի 16-ին ZOOM առցանց հարթակում կազմակերպել և իրականացրել են ՖԽՔ, որին մասնակցում էինք հետևյալ գերատեսչությունները.
    - **Ոստիկանություն,**
    - **Քննչական կոմիտե,**
    - **ՀՔԾ,**
    - **ՀՀ ԱՆ,**
    - **Վարչապետի աշխատակազմ:**

Քննարկման ընթացքում Քննչական կոմիտեի ներկայացուցիչները նշեցին, որ կատարված փոփոխությունը գովելի է. կոռուպցիոն հանցագործությունների ցանկն օրենքով սահմանելը իրավական տեսանկյունից ճիշտ է, սակայն փոփոխության իրական ազդեցության մասին խոսել կարելի է մեկ տարի անց, երբ հասանելի կլինեն վիճակագրական տվյալներ: Ոստիկանության ներկայացրած տեսակետները վերաբերում էին նրան, որ կատարված փոփոխության ազդեցության մասին առավել արժանահավատ տվյալներ ձեռք կբերվեն առնվազն մեկ տարի անց և հավելեցին, որ այս պահի դրությամբ Ոստիկանության վիճակագրությունը հուշում է, որ ի տարբերություն 2019 թվականի, երբ դեռ օրենքի մակարդակով սահմանված չէր կոռուպցիոն հանցագործությունների ցանկը, 2020 թվականին կոռուպցիոն հանցադեպերի թիվը նվազել է: ՀՔԾ ներկայացրած դիրքորոշմամբ՝ վերը նշված հստակեցումը կբերի առավել մասնագիտացված քննչական գործունեության: Այս դիրքորոշումը կիսում էր նա ՀՀ ԱՆ-ը, ըստ որի՝ կատարվող փոփոխությունը առավել տեսանելի կդառնա ժամանակի ընթացքում Հակակոռուպցիոն ամբողջական ինստիտուցիոնալ համակարգի ներդրմանը զուգահեռ: Ի հավելումն, փոփոխությունը գործնական նշանակություն կունենա Հակակոռուպցիոն մասնագիտացված քննչական, դատախազական և դատական մարմինների գործունեության ընթացքում: Իսկ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի սահմանումն ունի իրավական որոշակիության ապահովման հատկանիշ:

Քննարկվող միջոցառման վերաբերյալ ՊԵԿ-ը ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ կատարված փոփոխությունը գործնական ազդեցություն է թողել ՊԵԿ լիազորությունների, ՊԵԿ գործունեության ոլորտների վրա: Մասնավորապես, նոր ցանկում այլևս չկան այնպիսի կոռուպցիոն հանցագործություններ, որոնք բնույթով մաքսային կամ հարկային են, ուստի ՊԵԿ-ը դադարում է առնչություն ունենալ կոռուպցիոն գործերի քննության հետ:

Վարչապետի աշխատակազմից հայտնեցին, որ մասնակցություն չեն ունեցել քննարկվելիք օրենսդրական փոփոխության իրականացմանը, հետևաբար հավելյալ տեղեկատվության չեն տիրապետում:

- 32-րդ միջոցառման քննարկման համար ԻՀԱ-ն և Կոալիցիան 2021 թվականի փետրվարի 18-ին ZOOM առցանց հարթակում կազմակերպել և իրականացրել են երկրորդ ՖԽՔ-ը: Քննարկմանը մասնակցում էին մեկ տասնյակից ավելի ՀԿ-ների ներկայացուցիչներ: ՔՀԿ-ների միասնական դիրքորոշումն այն էր, որ պետությունը հաճախ օրենքով սահմանված ժամկետներում և կարգով չի պատասխանում հարցումներին, դիմումներին, օրենքով սահմանված դեպքերում չի խորհրդակցում քաղաքացիական հասարակության հետ: Արդյունքում, քաղաքացիական հասարակության ձայնը ոչ միշտ է լսելի: Հիշյալի համատեքստը կայանում է նրանում, որ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ՔՀԿ-ների կողմից ներկայացված առաջարկները հաշվի չեն առնվում, անկախ հանրային քննարկման գործիքների առկայությունից:

  Ինչ վերաբերվում է քննարկվելիք փոփոխությանը, ապա տարածված տեսակետն այն էր, որ հարկ է սպասել որոշ ժամանակ, որից հետո հնարավոր կլինի գնահատել փոփոխության ազդեցությունը, սակայն, ընդհանուր առմամբ, հստակեցումը բերում է դրական արդյունքների:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 33: ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		

33.	-	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ:	_	Միջազգային փորձի ուսումնասիրությունն իրականացված է (2020թ.)	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ Քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ոստիկանություն	Փոփոխված օրենսգիրքն առաջին ընթերցմամբ ընդունվել է

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ վերաբերելի միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա փոփոխություններ են նախատեսվել Քրեական օրենսգրքում, որը 09.12.2020 թվականին ԱԺ-ում ընդունվել է առաջին ընթերցմամբ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 34: Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		

34.	Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկան մշակված է:	–	–	ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն Արդարադատության ակադեմիա Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Տեղեկատվությունը ստացվել է ՀՀ գլխավոր դատախազությունից: Մեթոդիկան մշակված է:

ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված՝ ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» n 1332-ն որոշման 2020 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների ընթացքի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ սույն գործողության մասով Գլխավոր դատախազությունում գործել է աշխատանքային խումբ, որը զբաղված էր միջազգային փորձի ուսումնասիրմամբ և ներդրմամբ: ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրված տեղեկության համաձայն՝ Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանման կողմից մշակվել է «Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության առանձնահատկությունները» վերտառությամբ մեթոդական ուղեցույց:

Միաժամանակ, Արդարադատության ակադեմիայի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մշակվել և վերամշակվել են մասնագիտական պատրաստման և վերապատրաստման դասընթացներ (առարկայական կուրսեր), որոնք ներառում են նաև կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննությանը վերաբերող հիմնահարցեր: Նշված դասընթացների ուսումնամեթոդական ապահովումն իրականացնելու նպատակով Ակադեմիան, որոշ դեպքերում՝ նաև միջազգային համագործակցությամբ, մշակել է ուսումնական ձեռնարկներ և ուսումնաօժանդակ նյութեր, որոնք ներառված են քննչական, դատախազական և դատական համակարգերի ունկնդիրների ուսուցման ծրագրերում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 35: Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
35.	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների դրանց քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին վիճակագրության վարման կարգերը մշակված են:		–	–	ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ ոստիկանություն	Վիճակագրության վարման կարգերը մշակված են:

Ոստիկանության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների, դրանց քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին վիճակագրության կարգը պետք է բխի հանցագործությունների միասնական հաշվառման նոր կարգի դրույթներից, որի նախագծի մշակման աշխատանքներն արդեն որոշակիորեն իրականացվել են ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում և այն հնարավոր կլինի ավարտական տեսքի բերել միայն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումից հետո:
ՀՀ Գլխավոր դատախազությունից ստացված կոռուպցիոն հանցագործությունների ցանկին համապատասխան՝ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում մշակվել են կոռուպցիոն հանցագործությունների և դրանք կատարած անձանց հաշվետվությունների ծրագրային բաղադրիչները, որի արդյունքում ստացվում են հաշվետվություններ և տրամադրվում շահագրգիռ ծառայություններին:

Հաշվետվությունները յուրաքանչյուր կիսամյակ տրամադրվում են նաև ՀՀ վիճակագրական կոմիտեին և դրանք հրապարակվում են կոմիտեի պաշտոնական կայքում:

Գլխավոր դատախազության կողմից տրամադրած տեղեկության համաձայն՝ կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրման նպատակով համապատասխան փոփոխություններ են կատարվել վիճակագրական հաշվետվությունների օրինակելի ձևանմուշներում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 36: Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
36.	-	Մշակված է ծրագրային ապահովումը և ծրագիրը ներդրված է:	–	–	ՀՀ Վարչապետի աշխատակազմ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Ծրագրային ապահովումը մշակված և ներդրված է:

Վարչապետի աշխատակազմի, ՀՀ ԱՆ և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ փոխգործելիության միասնական հարթակը մշակված է, ներդրված է և հասանելիությունը ապահովված է:

Ներկայում փոխգործելիության հարթակին են միացված քրեական հետապնդման մարմիններից ՀՀ ոստիկանությունը, Քննչական կոմիտեն, ՀՔԾ-ը, Դատախազությունը, ԱԱԾ-ն: Նշված մարմինները ստանում են տվյալներ Ոստիկանության Անձագրային և վիզաների վարչության ԲՊՌ-ից, Ճանապարհային ոստիկանության, Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի, Կադաստրի կոմիտեի, ՊԵԿ-ի, ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության և Քաղաքացիական կացության ակտերի գործակալության, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ռեգիստրներից, և այլն:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 37: Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
37.	Միջազգային փորձն ուսումնասիրվել է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ:	Առաջարկությունների փաթեթի հիման վրա ստեղծվել է բանկային հաշիվների կենտրոնական ռեեստր:	Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի վերաբերյալ միջազգային փորձն ուսումնասիրվել և քննարկվել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում	Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրը ստեղծվել է և գործարկվում է (2020թ.-ի 2-րդ կիսամյակ):	Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	**Ներկայացվում է ստորև:**

- 37-րդ միջոցառման քննարկման համար ԻՀԱ-ն և Կոալիցիան 2021 թվականի փետրվարի 16-ին ZOOM առցանց հարթակում կազմակերպել և իրականացրել են ՖԽՔ: Քննարկմանը մասնակցում էր **Կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների**

կենտրոնի ներկայացուցիչը: Ըստ Կենտրոնական բանկի՝ բանկը 2020 թվականին նախաձեռնել է բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծման գործընթացը, որի շրջանակներում նախ իրականացվել է վերաբերելի միջազգային փորձի ուսումնասիրություն, ապա իրավական կանոնակարգերի մշակում և տեխնիկածրագրային ապահովում: Արդյունքում, կազմվել է «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը, որն ուղարկվել է քննարկման և կարծիքի բոլոր շահագրգիռ կողմերին: Ներկայումս նախագիծը քննարկվում է Կառավարությունում: Կենտրոնական բանկի փոխանցմամբ, իրավական ապահովման աշխատանքներին զուգահեռ առաջընթաց է գրանցվել նաև համակարգի տեխնիկածրագրային ապահովման ուղղությամբ և այն պատրաստ է գործարկման:

- 37-րդ միջոցառման քննարկման համար ԻՀԱ-ն և Կոալիցիան 2021 թվականի փետրվարի 18-ին ZOOM առցանց հարթակում կազմակերպել և իրականացրել են երկրորդ ՖԽՔ-ը: Քննարկմանը մասնակցում էին մեկ տասնյակից ավելի ՀԿ-ների ներկայացուցիչներ: Ըստ նրանց՝ Ռեեստրը կարող է խնդիրներ առաջացնել բանկային գաղտնիքի, հաճախորդների պաշտպանվածության և իրավունքների խախտման դեպքում պատասխանատուներին հայտնաբերելու գործընթացներում:

Ստացվում է, որ ռեեստրը փաստացի ստեղծված է, տեխնիկածրագրային ապահովումն արդեն իսկ պատրաստ է և կարող է գործարկվել, իսկ Ռեեստրի գործարկման իրավահարաբերությունները կարգավորող նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 38: Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
38.	Ուսումնասիրվել են կոռուպցիոն գործերով միջազգային համագործակցության իրականացման մեխանիզմները և դրանցում առկա խոչընդոտները:		–	Իրականացվել է կոռուպցիոն գործերով միջազգային համագործակցության իրականացման մեխանիզմների և դրանցում առկա	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության	Կազմվել է «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: **Այլ արդյունքներ ներկայացվում են ստորև:**

			խոչընդոտների վերաբերյալ ուսումնասիրություն (2020թ.-ի 2-րդ եռամսյակ):	ծառայություն	

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ իրականացվել են կոռուպցիոն գործերի, միջազգային համագործակցության իրականացման մեխանիզմների և դրանցում առկա խոչընդոտների վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքնում մշակվել է «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի նախագիծը, որը դրվել է հանրային քննարկման, ներկայացվել է շահագրգիռ մարմիններին:

ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած տեղեկության համաձայն՝ 2019 թվականի նոյեմբերի 24-28-ը ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալը մասնակցել հակակոռուպցիոն ճանաչողական այցելությանը Ուկրաինայի Հանրապետության կիև քաղաք, որի նպատակն է եղել ուսումնասիրել Ուկրաինայի հակակոռուպցիոն մարմինների փորձը կոռուպցիայի դեմ պայքարում, հանդիպումներ ունենալ հակակոռուպցիոն պետական մարմինների և տվյալ ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 39: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		

39.	Ուսումնասիրվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և վերադարձման վերաբերյալ ՀՀ օրենսդրության կարգավորումները և դրանց համապատասխանությունը ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի պահանջներին: Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն մասին» օրենքի նախագիծ:	«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով:	Ապօրինի ակտիվների բռնագանձման և վերադարձման վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվել է, առաջարկությունները քննարկվել են	«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ԱԺ (2020թ.-ի 1-ին եռամսյակ):	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ Կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Օրենքն ընդունվել է: **Այլ արդյունքներ ներկայացվում են ստորև:**

ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ պահանջվող օրենքը 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունվել է:

Կատարված գրասենյակային հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի հաստիք, որը համակարգում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտը, և ստեղծվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունը: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների և գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվել են բաց մրցույթներ: Մրցույթներն անցկացրել են ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը, որում փորձագետներից երկուսը նշանակվել են ՀՀ գլխավոր դատախազի կողմից՝ հասարակական հիմունքներով: Փորձագետներից մեկը Հայաստանի ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի նախկին նախագահ Արկադի Սահակյանն էր: Պետք է նշել, որ Գլխավոր դատախազի տեղակալի հաստիքը համարելու նպատակով մրցույթին մասնակցելու հայտ էին ներկայացրել երկու թեկնածու: Թեկնածուներից մեկը չի մասնակցել մրցույթին, և արդյունքում ստացվել է, որ գխավոր դատախազի տեղակալի մեկ թեկնածուն մասնակցել է կազմակերպված մրցույթին, բայց վերջինիս ընտրությունն ու նշանակումը փաստացի անցկացվել է այլընտրանքային թեկնածուի բացակայության պայմաններում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 40: Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
40.	Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության միջազգային փորձն ուսումնասիրվել է:		–	«Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ (2020թ.-ի 2-րդ եռամսյակ)	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	Փոփոխված օրենսգիրքն առաջին ընթերցմամբ ընդունվել է:

2020 թվականի համար վերստուգիչ ցուցանիշով ակնկալվող արդյունքից մեկ քայլ առաջընթաց է կատարվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծերը ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով: 2020 թվականի մայիսի 21-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը, որը 2020 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունվել է առաջին ընթերցմամբ: Սույն նախագծի շրջանակում նաև կարգավորվել են իրավաբանական անձանց կոռուպցիոն հանցագործություններով քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 41: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման

			ցուցանիշ			արդյունք
	2019	2020	2019	2020		
41.	Իրականացվել է համապատասխան ուսումնասիրություն: Ներկայացվել է առաջարկ առկա օրենսդրական անհամապատասխանությունների և դրանց վերացման առկա հնարավորությունների վերաբերյալ:		–	–	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Առաջարկությունների փաթեթը գտնվում է լրամշակման փուլում: **Այլ առաջարկներ ներկայացվում են ստորև:**

Ոստիկանության և ՀՀ ԱՆ-ի կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մշակվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու վերաբերյալ» առաջարկությունների փաթեթը, որն ուղարկվել է կարծիքի բոլոր շահառուներին, նաև՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ: Ստացված առաջարկությունների հիման վրա ներկայումս նախագիծ է մշակվում: Առաջարկությունների փաթեթով կատարվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի հիման վրա կատարվող կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը օպերատիվ-հետախուզական միջոցառման իրավակիրառ պրակտիկան: Մասնավորապես՝ առաջարկությունների փաթեթում բացահայտվել է նշված օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման շրջանակների և իրավաչափության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, ՄԻԵԴ-ի կողմից կատարված դիտարկումները: Նշվածը համադրելով քրեադատավարական օրենսդրության շարունակական զարգացմամբ պայմանավորված փոփոխությունների հետ, վեր է հանվել կաշառք ստանալու կամ կաշառք տալու օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու շրջանակների ընդլայնման հարցը: Առաջարկվել է «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» ՕՀՄ-ի կատարման հնարավորությունը ոչ թե կապել «կաշառք ստանալու» կամ «կաշառք տալու», այլ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված կոնկրետ հանցագործությունների բացահայտման հետ: Առաջարկվել է ուղղակիորեն թվարկել այն բոլոր հանցակազմերը, որոնցով նախատեսված հանցագործությունների բացահայտման համար իրավաչափ կհամարվի կատարել քննարկվող ՕՀՄ-ն:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

ՈԼՈՐՏ 4: ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՁԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

	2019թ.	2020թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	5	7
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	1	3
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍՇԱՄԲ	-	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	4	4
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	-	-

Գործողություն 42: Հանրային իրազեկման տարեկան արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
42.	Հաղորդակցման ռազմավարությունն ու համապատասխան գործողությունների ծրագիրը մշակվել ու ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվում են: Կիսամյակային հաշվետվությունները՝ ըստ սահմանված կարգի ներկայացվել են:	–	Հաղորդակցման ռազմավարություն ու համապատասխան գործողությունների ծրագիրը հաստատվել են ՀՀ վարչապետի որոշմամբ: Հաղորդակցության մասին կիսամյակային հաշվետվությունները ըստ սահմանված ձևաչափի ներկայացվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին ու հրապարակվել են Խորհրդի ու ՀՀ ԱՆ կայքէջերում:	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ Վարչապետի աշխատակազմ Պետական կառավարման համակարգի մարմիններ Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) Զանգվածային լրատվության միջոցներ (համաձայնությամբ)	Աշխատանքներն ընթացիկ փուլում են:

ՀՀ ԱՆ և Վարչապետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ միջազգային փորձի ուսումնասիրության, ՄԱԶԾ-ի հետ համագործակցության հիման վրա ՀՀ ԱՆ-ի կողմից մշակվել է «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2021-2022 թվականների հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ներկայումս ՀՀ ԱՆ-ում քննարկման փուլում է գտնվում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 43: «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
43.	Մշակվել են «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի դասավանդման ծրագրերը:	Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկա:	–	«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի դասավանդման ծրագրերը մշակված են (2020թ.-ի 2-րդ եռամսյակ): «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի դասավանդման ծրագրերով իրականացվում է դասավանդում (2020թ.-ի 3-րդ եռամսյակ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ԲՈՒՀ-եր Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ	Աշխատանքներն ընթացիկ փուլում են:

ԿԳՄՍՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում» միջոցառման իրականացման ուղղությամբ ՀՀ ԿԳՄՍՆ համապատասխան գրությամբ հարցը քննարկման է ներկայացվել ԲՈՒՀ-երին՝ հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջը, այն է՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակումն ու հաստատումը, ուսումնական գրականության և ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակումը բարձրագույն ուսումնական հաստատության իրավասությունն է: ԲՈՒՀ-երի ուսումնական պլաններում «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առանձին առարկայի ներառման հնարավորության հարցի առնչությամբ քննարկումների արդյունքում՝ ԲՈՒՀ-երից նախարարությանն է ներկայացվել տեղեկատվություն, ըստ որի՝ ԲՈՒՀ-երում, հասարակագիտական առարկաների շրջանակներում արդեն իսկ իրականացվում են կոռուպցիոն ռիսկերի, կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ դասախոսություններ: Ավելին՝ ԲՈՒՀ-երի ուսանողների շրջանում հակակոռուպցիոն գիտելիքի և արժեքների ձևավորմանը նպաստում են ԲՈՒՀ-երի ներքին կարգերում և ընթացակարգերում հիմնարար սկզբունքների ամրագրումը, մասնավորապես՝ հակակոռուպցիոն քաղաքականության դրույթներն ամրագրված են

հակակոռուպցիոն ծրագրերում, ուսանողների գնահատման համակարգերում, ընթացիկ քննությունների անցկացման և բողոքարկման ընթացակարգերում, ամփոփիչ ատեստավորման կարգում, էթիկայի կանոնագրքերում, ակադեմիական ազնվության քաղաքականությունում:

Միևնույն ժամանակ ԲՈՒՀ-երը պատրաստակամություն են հայտնել իրենց ուսումնական պլաններում որոշակի ժամաքանակով ներառելու «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան՝ առարկայի դասավանդման համար ծրագիր մշակելուց և կրթական վերջնարդյունքները սահմանելուց հետո:

Անդրադառնալով նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտին առնչվող գործողության ընթացքին, այն է՝ «...միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում», ըստ ԿԳՄՍ-ի ներկայացված կիսամյակային հաշվետվությունների համարվում է կատարված:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 44: Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
44.	Ավագ դպրոցում ուսուցանվող «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ կատարվել է ուսումնասիրություն: Ներկայացվել է համապատասխան առաջարկությունների փաթեթ:	Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է:	_	«Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացված է, առաջարկությունները ներկայացված են (2020թ.-ի 2-րդ եռամյակ): «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների ներգրավմամբ իրականացվում է դասավանդում (2020թ.-ի 3-րդ եռամսյակ)	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ԲՈՒՀ-եր	Աշխատանքներն ընթացիկ փուլում են:

ՀՀ ԿԳՄՍՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման շրջանակներում հասարակագիտության առարկայական վերջնարդյունքներում և ծրագրային բացվածքում անդրադարձ է կատարվել հետևյալ հակակոռուպցիոն թեմաներին.

1. Կոռուպցիայի տեսակները, պատճառներն ու հետևանքները (9-րդ դասարան)
2. Տնտեսական մրցակցություն, ընտրություններ (ընտրախախտումներ), քաղաքացիական մասնակցություն և վերահսկողության ձևեր (10-րդ դասարան)
3. Կոռուպցիայի դեմ պայքարի ձևերն ու դրանց արդյունավետությունը (11-րդ դասարան):

Նշված փոփոխությունները ամրագրելու նպատակով մշակվել է է «ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը սահմանում է հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու դրույթները: Նշված նախագիծը մշակվել, շրջանառվել, դրվել է հանրային քննարկման և սահմանված կարգով ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը վերադարձվել է քննարկման՝ ռազմական դրության ավարտից հետո:
Միաժամանակ, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 1196-Ա/2 հրամանով հաստատվել և հանրակրթական ուսումնական հաստատություններին է տրամադրվել «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի աջակցությամբ 11-րդ դասարանի համար ստեղծված «Հասարակագիտություն» ուսումնական առարկայի դասագիրքը և նշված դասագրքի հիման վրա մշակված մեթոդաբանական ձեռնարկը՝ նախատեսված հանրակրթական դպրոցի ուսուցիչների համար: Նշված դասագրքում ներառված են կոռուպցիային առնչվող բաժիններ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 45: Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության, «Մարդու իրավունքներ» թեմայով

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		

45.	Մշակվել են իրազեկվածության բարձրացման ուղեցույցները, վերապատրաստման ծրագրերը:	Անցկացվել են իրազեկվածության բարձրացմանն ուղղված պարբերական վերապատրաստումներ, սեմինարներ, միջոցառումներ:		Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերում առկա են կոռուպցիայի կանխարգելման, «Մարդու իրավունքներ» թեմաներով դասընթացներ (2020թ.-ի 4-րդ եռամսյակ): 50 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքա-ցիական ծառայության գրասենյակ ՀՀ արդարադատության նախարարություն Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Գործողությունը կատարված է: Որոշ լրացուցիչ գործողությունների կատարումը կասեցված է:

Վարչապետի աշխատակազմի և ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել և իրականացրել է բարեվարքություն (այդ թվում՝ վերապատրաստման ծրագրում եղել են բաժիններ մարդու իրավունքների և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ) թեմայով 25 վերապատրաստում: Վերապատրաստումները կազմակերպվել են սեպտեմբերի 14-ից դեկտեմբերի 24-ը ներառյալ՝ յուրաքանչյուրը երկու աշխատանքային շաբաթ տևողությամբ: Վերապատրաստումներն իրականացվել են հեռավար եղանակով, որոնց մասնակցել են 390 քաղաքացիական ծառայողներ:

ՁԼՄ-ների, մասնագիտական հանրության և ՀԿ-ների համար նախատեսված սեմինարների անցկացումը հետաձգվել է՝ պայմանավորված ՀՀ-ում 2020 թվականի մարտի 16-ին ընդունված արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշմամբ և 2020 թվականի սեպտեմբերի 27-ի ռազմական դրություն հայտարարելու մասին որոշմամբ:
Իրազեկման բնույթի տեսանյութերի պատրաստումը և տարածումը հետաձգվել է՝ կապված ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ-ում քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի հետաձգման հետ:

Հանրության շրջանում քաղաքացիական ծառայության համակարգի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով սոցիալական ցանցում իրազեկող ինֆոգրաֆաների տեղադրումը հետաձգվել է, քանի որ դրանք նախատեսված էին փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակի կողմից մշակվող «Հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030թ. ռազմավարության» շրջանակներում: Վերջինիս հետ կապված աշխատանքները հետաձգվել են՝ պայմանավորված ՀՀ-ում 2020 թվականի մարտի 16-ին ընդունված արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշմամբ և 2020 թվականի սեպտեմբերի 27-ի ռազմական դրություն հայտարարելու մասին որոշմամբ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 46: Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
46.	-	Մշակվել են հեռավար ուսուցման մոդուլներ:	_	Քաղաքացիական ծառայության համակարգում հեռահար ուսուցման մոդուլները մշակված են (2020թ.-ի 2-րդ եռամսյակ)	Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	Ուսուցման մոդուլները մշակված են:

Վարչապետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Քաղաքացիական ծառայողների համար Մարդու իրավունքներ թեմայով մշակվել են հեռավար ուսուցման մոդուլներ՝

1. Երեխաների իրավունքներ,
2. Խտրականության դեմ պայքար,
3. Կանանց իրավունքների և գենդերային հավասարության վերաբերյալ դասընթացի ընդհանուր նկարագիր:

Բացի այդ, մշակվել են բարեվարքություն, մարդու իրավունքներ և կոռուպցիայի կանխարգելման թեմաներով հեռավար ուսուցման մոդուլները: Նշված թեմաները ներառվել են քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերում: Բարեվարքություն թեմայով

(վերապատրաստման ծրագրում եղել են բաժիններ մարդու իրավունքների և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ) իրականացվել են վերապատրաստումներ, որոնց մասնակցել են 39 պետական մարմինների 390 քաղաքացիական ծառայողներ: Յուրաքանչյուր վերապատրաստման ավարտից հետո քաղաքացիական ծառայողներն անցել են թեստավորման փուլ՝ վերապատրաստման արդյունավետությունը գնահատելու համար:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 47: Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020	2019	2020		
47.	-	Մշակվել են թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման տեխնիկական պայմանները	–	–	Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	Համակարգը գործում է:

Վարչապետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ից գործարկվել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը, և 2020 թվականի հոկտեմբերի 1-ից պետական մարմիններում թափուր պաշտոնների համալրման մրցույթներն անցկացվում են քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով: Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման և քաղաքացիական ծառայության տեղեկատվական համակարգերը միասնականացնելուց հետո 2020 թվականի դեկտեմբերի 21-ին Առողջապահության նախարարության կողմից քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով անցկացվել է առաջին մրցույթի թեստավորումը, որը ուղիղ հեռարձակվել է Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջում:
Իրականացվել է նաև թափուր պաշտոնի համալրման մրցույթի թեստավորման փուլի օնլայն հեռարձակում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 48: Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում

No.	Սպասվող արդյունք		Վերստուգիչ ցուցանիշ		Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2019	2020-2022	2019	2020		
48.	Մշակվել է կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման մեթոդաբանություն:	Տարեկան կտրվածքով առնվազն 1 անգամ հասարակության շրջանում, այդ թվում՝ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում, իրականացվող հարցման արդյունքում վեր են հանվել հանրության կարծիքով առավել կոռումպացված ոլորտները, առկա կոռուպցիոն ռիսկերը, ներկայացվել է ՀՀ Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության վերաբերյալ հասարակության կարծիքը, քայլեր են ձեռնարկվել ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:	–	–	ՀՀ Վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության նախարարություն Պետական կառավարման համակարգի մարմիններ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Արդյունքները ներկայացվում են ստորև:

ՀՀ արդարադատության նախարարությունը և IRI միջազգային կազմակերպության համագործակցության արդյունքում՝

- IRI միջազգային կազմակերպության կողմից 2019 թվականին Երևանում և ՀՀ մարզերում իրականացված հարցումների արդյունքում ներակայացվել են հանրության կարծիքով պետական ոլորտների կոռուպացվածության ցուցանիշները, վեր են հանվել դրանց պատճառները՝ ըստ հանրության ընկալման:

- IRI միջազգային կազմակերպության կողմից պարբերաբար իրականացվող հանրային հարցումների (Public opinion survey) շրջանակներում 2019 թվականից տրվում են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցադրումներ:

Հարկ է նշել, որ ներկայումս աշխատանքներ են տարվում միայն կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող առանձին հարցումներ անցկացնելու վերաբերյալ: Այս առումով, ՀՀ ԱՆ-ը արդեն իսկ համագործակցում է ԵԽ Երևանյան գրասենյակի հետ, մշակվում է համապատասխան մեթոդաբանություն:

Բացի այդ, ԵԽ երևանյան գրասենյակի «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակներում իրականացվել է հետազոտություն և հրապարակվել է զեկույց «Ազդարարների պաշտպանության ՀՀ օրենսդրությունը և դրա կիրառելիությունը զինված ուժերում՝ զուգահեռներ միջազգային չափորոշիչների և լավագույն փորձի հետ» խորագրով, որում միջազգային և տեղական փորձագետների կողմից վեր են հանվել այն խնդիրները, որոնք խոչընդոտում են զինված ուժերում մարդու իրավունքների և կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ ազդարարմանը: Ազդարարման համակարգերի արդյունավետության խոչընդոտները բացահայտելու նպատակով նշված ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության 1-ին և 2-րդ ԲԿ ենթակայության զորամասերում իրականացվել էր նաև սոցիոլոգիական հետազոտություն՝ հասկանալու, թե որքանով են զինծառայողները պատրաստ ազդարարել իրենց իրավունքների խախտման կամ այլ չարաշահումների, այդ թվում՝ կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ:

Երկրում ստեղծված իրավիճակով պայմանավորված աշխատանքները հնարավոր չի եղել ամփոփել 2020 թվականի ընթացքում և տեղափոխվել է 2021 թվական:

2020թ. երկրորդ կիսամյակի ընթացքում հեռավար եղանակով տեղի են ունեցել քննարկումներ ՀՀ ոստիկանության, ՀՀ ԱՆ, ԵԱՀԿ, ԵՄ և ՄԱԿ-ի ներկայացուցիչների միջև: Այսպիսով, հարցումների իրականացման միասնական մեթոդաբանություն դեռևս հաստատված չէ, որից հետո հնարավոր կլինի հարցումներ իրականացնել Երևան քաղաքում և ՀՀ մարզերում:
Նաև, որոշվել է ԵԱՀԿ-ի անմիջական աջակցությամբ իրականացնել ոստիկանության հանդեպ վստահության վերաբերյալ հանրային հարցում: Համատեղ մշակված հարցման հարցաշարում՝ ի թիվս այլ հարցերի, ներառված են նաև կոռուպցիայի, ոստիկանության հանդեպ հանրային վստահության մակարդակի հետ կապված հարցեր: Հարցումը նախատեսված է իրականացնել 2021թ. ընթացքում IMR կազմակերպության կողմից:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրով նախատեսվող գործողությունների մշտադիտարկման ենթակա ինդիկատորները հիմնականում ներառում են ելքային մակարդակի ինդիկատորներ (output level indicators): Այս ինդիկատորները հիմնականում վերաբերում են նրան, թե արդյոք Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրով նախատեսված այս կամ այն գործողությունը կատարվել է, թե՝ ոչ, այնինչ գործողության և ակնկալվող արդյունքի կապի վերաբերյալ ինդիկատորները հիմնականում բացակայում են: Սա ենթադրում է, որ կատարված գործողությունների ազդեցության գնահատում չի իրականացվում և չի գնահատվում, թե արդյոք գործողության կատարումը հանգեցրել է ցանկալի արդյունքին/արդյունքներին: Օրինակ, սույն զեկույցում ներկայացված գործողություններ 1, 2, 3, 11-ի վերլուծություններն ու գնահատականները թույլ են տալիս եզրակացնելու որ այդ ինդիտակուրները ամբողջապես հնարավորություն չեն ընձեռում գնահատել կատարված գործողությունների որակական ասպեկտները: Այս իսկ պատճառով, որպես Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրերի իրականացման արդյունավետության չափման ինդիկատորներ առաջարկում ենք ներառել նաև ազդեցության մակարդակի ինդիկատորներ (impact level indicators), որոնց միջոցով հնարավոր կլինի գնահատել, թե արդյոք իրականացված գործողությունները հանգեցրել են ցանկալի արդյունքներին և ինչպիսի ազդեցություն են ունեցել երկարաժամկետ հատվածում:

2. Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրով նախատեսվող գործողությունների մի մասը չունեն վերստուգիչ ցուցանիշներ, ինչը հնարավորություն չի տալիս պարզել կոնկրետ ժամանակահատվածում իրականացված գործողության իրական ծավալը և իրական ազդեցությունը: Առաջարկում ենք, բոլոր այն միջոցառումների համար, որոնց դեպքում նախատեսված չեն վերստուգիչ ցուցանիշներ, վերանայել և նախատեսել այդպիսիք:

3. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների կատարողականը գնահատելու և մշտադիտարկելու նպատակով որոշ վերստուգիչ ցուցանիշների համար հիմք են ընդունվում մեկ աղբյուրից տրված գնահատականները, ցուցիչները, և համեմատականներ չեն կատարվում այլ վստահելի աղբյուրների կողմից տրված արդյունքների, տեղեկությունների հետ: Առաջարկում ենք վերստուգիչ ցուցանիշների ստուգման նպատակով համադրել մի քանի աղբյուրներից տրամադրած տեղեկությունները՝ գործողությունների կատարողականը արդյունավետ գնահատելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Ընդունել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում և հարակից այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը և նախատեսել ԿԿՀ-ին որպես կենտրոնական մարմին, որը կհամակարգի և կվերահսկի Բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեությունը, ներառյալ՝ նրանց համար դասընթացների կազմակերպումը:
2. Ընդունել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը՝ հանրությանը հասանելի դարձնելով ԿԿՀ-ի կողմից իրականացված հանրային ծառայողների բարեվարքության ստուգման արդյունքները՝ պահպանելով անձնական տվյալները՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:
3. Իրականացնել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի ձևավորման և կարողությունների իրական գնահատում, վեր հանել ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ ընդգրկված ՀԿ-ների անդամակցության, ինչպես նաև Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի Խորհրդին անդամակցության արհեստական խոչընդոտների ոչ իրավաչափ հիմքերը և դրանց արդյունքում կայացնել համապատասխան իրավաչափ որոշումներ:
4. Ընդունել հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններ և քաղաքացիական ծառայողների, խորհրդարանի անդամների և քննիչների վարքագծի կանոններ:
5. Ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձանց «ընտանիք» եզրույթի շրջանակը՝ նախատեսելով պաշտոնատար անձի հետ սերտ առնչություն ունեցող այնպիսի անձանց, ինչպիսիք են ամուսնու/կնոջ ծնողը, երեխան, եղբայրը կամ քույրը, ինչպես նաև կնքահայր-սանիկ հարաբերություններում գտնվող անձինք:
6. Վերապատրաստել հիմնական շահագրգիռ կողմերի (քաղաքականություն մշակողներ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, գիտական հաստատություններ, լրատվամիջոցներ, պետական պատվիրատուներ, բիզնեսներ) ներկայացուցիչներին հակակոռուպցիոն և բարեվարքության թեմաներով՝ նպաստելով վերջիններիս կարողությունների ուժեղացմանը:
7. Վերանայել Հակակոռուպցիոն ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը՝ ըստ սույն զեկույցում ներկայացված մեթոդական և բովանդակային առաջարկների, ինչպես նաև՝ Արցախյան 2020 թվականի պատերազմի հետևանքով Հայաստանում ստեղծված իրավիճակի և առաջացած մարտահրավերների լույսի ներքո: